

ԴԱՐԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԼՈՒՅՍԻ ՄԵՂԵԴԻ

Բանաստեղծություններ, պոեմ



ԳՐԱԿԱՆ ԷՏԵՅՈՍ

---

ԵՐԵՎԱՆ  
2009

ՀՏԴ 891. 891-1 Խաչատրյան  
ԳՄԴ 84Հ-5  
Խ 282

*Խմբագիր Շանթ Մկրտչյան*

Խ 282 Խաչատրյան Դարիկո  
Լույսի մեղեդի: Բանաստեղծություններ, պոեմ  
Դարիկո Խաչատրյան.-Եր.:  
Գրական Էտալոն, 2009.-192 էջ

Բանաստեղծուհոը ութերորդ գիրքն է, որտեղ ամփոփված են վերջին տարիների բանաստեղծությունները և «Լույսի մեղեդի» քնարական-փիլիսոփայական պոեմը:

ԳՄԴ 84Հ-5

ISBN 978-99941-813-2-2

@ Դարիկո Խաչատրյան, 2009 թ.  
@ «Գրական Էտալոն», 2009 թ.



բանաստեղծություն,  
ու գինի լցրեց  
երախտավորի համար այն լուսե,  
որի շուրթերը աղն են որդեգրել,  
ու գովերգում են ներկայությունը  
Աստուծո Որդու արքայության...

12.05.08 թ.

որպես խաղաղն աշխարհի՝  
ամոքումը հույսերի,  
ուր երկինքներն են ապրում...

04.08.07 թ.

## **Geschreiben Für Frau Elisabeth Leonhardt**

*(գրված տիկին Էլիզաբեթ Լեոնհարդի համար)*

Այնքա՛ն եմ հեռու,  
որ խորթացել է անունս ինձնից,  
բայց հայրենիս է իջել ուսերիս  
ու ժամն է քաղցր, շաբաթ իրիկուն:  
Հյուսիսի աստղն է չքնաղ ծիկրակում  
ամպերի շեմից...  
Ռուսական հյուղակ,  
ցանկապատերի պարապ մեղեդի,  
սագեր, ջրափոս, տնկովի անտառ,  
արիեստական լիճ, փոքրիկ ձկնիկներ,  
ճահճացած գետակ, կողքին լճակներ,  
լուսաշող կարապ՝ ջրաշուշանին  
գերված, մնացած,  
երգասաց կռունկ՝ ցավի պես մաքուր,  
լույսը՝ հորիզոն, տափարակ անվերջ,  
կեչիներ քնքուշ  
մաքուր հույսերի թևաբախումին  
մաղում են բառերն իմ աջ մատների  
ու այսպես անվերջ...  
Տնակում՝ անկյուն իկոնաների,  
սուրբ խաչելություն,  
նրանց դեմ-դիմաց աղոթող կինը՝  
Էլիզաբեթը՝ ծեր գերմանուհին-  
այնքա՛ն է բարի,  
ասես ներկան է երեք խաչերի  
ու Տիրոջ խաչի առջև է ծնկած:  
Աղոթքից հետո դեռ աչքերը փակ,  
սուրբ ջուր է ցանում, որ չարը վանի,  
ջուրը, կարծես թե լցված է գետից մեր Արածանի,

## ՕՐ Է ԾՆՆՂՅԱՆ

Մանուշակագույն շուրթն արշալույսի  
Եկել է երկնից՝ հույսի նվաճման,  
Րոպեն լռում է նրա հմայքից,  
Ինչ համբույրների ծով է իրական:  
Խոստումի հովտում լույսի դռներից  
Աստղեր են հոսում խենթ ցնորքների,  
Չմարող ծայներ մեղեդիների,  
Ամռան վարդերի ընծայականով  
Տանում են գանձեր ու շռայլումներ.  
Րավդոսյան ճամփին ծիածանների,  
Յոթնանվագին տաղասացների...  
Ապրելու պահերն ու սերն է զնգում  
Նռնենիների այգում հավատի...  
Էության բերկրանք-սիրտն է թելադրում  
Դռներին գրել վառ օգոստոսի,-  
Վաղ հյուրընկալման ժամը ծաղկումի  
Այսպես է շնչում քո ակնթարթում՝  
Րոպե առ րոպե հավիտենության  
Դրախտ պարտեզի Վարդը ծննդյան.  
Իմաստի ճամփով վար է իջնելու...

01.08.07 թ.

## ԻՆՉՊԵՍ ԼՍԵՑԻՐ

Ա՛խ, երգում էի բոցավառ վարդը  
ինչպե՛ս է ծաղկում հուլիսի շուրթին,  
ինչպե՛ս է ծնվում երազն առաջին,  
ինչպե՛ս է հասուն բերքը հավաքում  
Կեսօրը վերջին...  
Եվ պարտեզների հոծ բավիղներում  
ինչպե՞ս լսեցիր երգս զվարթուն,  
ինչպե՞ս գտար ինձ,  
ու հրճվանքները շարվեցին սրտիս  
կամրջակներին  
և տարան մինչև լուսաստղի այգին...  
Այնտե՛ղ էր վարդը,  
և ակնթարթը այնպես էր ծաղկում,  
ասես հրդեհ էր բռնկվել ամբողջ  
Գոյի կաթսայում...  
Աստըծո աչքը քաղցր էր նայում  
իր տավրահարին...  
Բացվու՛մ էր Վարդը՝  
սերը ճառագուն արշալույսների:

26.06.07 թ.



ու Վարդը բացվեց,  
հազա՛ր երանի...

26.06.07 թ.

կոկոն մատները՝ կերոններ անմար,  
ճերմակ եզների վարելահողում,  
ու ներկայացված վարդերի փնջով,  
գանգուր վարսերը՝ բառերի անձրև  
ջրի գաղտնիքի ակոսասերմին,  
որ պիտի ծլի ուրիշ մի դարի  
սրբազան արտում,  
իսկ ճանապարհը նեղլիկ արահետ –  
դեպի անդունդի ժամանակները –  
մինչև սարն ի վեր...  
Ո՛վ Երանելի, օրհնեցիր պահն այդ...

07.08.07 թ.

Երգեր կծնվեն նորից,  
իմ մահին տեր կկանգնեմ  
ու կասեմ,- Պնա՛, կգա՛ մ,  
Լուսնեղջյուրը քանի՞ անգամ  
պտտի սլաքներն իր բարի,  
քանի՞ անգամ ցուցանի քեզ  
դեմքն իր ամբողջ՝  
նման ոսկե նկանակի...  
Ինձ հազար անգամ գտել ես,  
դե՛ հազա՛ր անգամ էլ գտիր,  
ե՛կ դեպի Անթառամի դաշտերը՝  
Գաղտնի համբույրները ամռան,  
Բացարձակ ծաղիկը մինչև,  
մինչև Քարերը մահվան...

22.06.07 թ.

## ՍԻՐԵԼԻ ՄԱՐԴԻԿ.

Հանձարները չեն մոլորվում:  
Նրանք միայն հալածվում են,  
խլանում, կուրանում, ցնորվում...  
Անչափ շատ են նրանց հոգու  
գույները, հնչյուններն անքանակ,  
աստղերի պես անհաշիվ ու վառ,  
նրանց ունկերում գիշերուզօր  
տիեզերածավալ, բյուրեղյա  
համանվազ է,  
նրանք ծնվում են երկինքների  
համը զգացող շուրթերով,  
երկինքների բույրն են բացահայտում  
բոլորի համար, նորից հալածվում,  
նորից իջնում դժոխք,  
նորից բարձրանում իններորդ երկինք,  
նորից մեղա գալիս իրենց տրված  
**ան-չափի** համար,  
տեսնում՝ կույր աչքերով,  
լսում՝ խուլ ունկերով,  
տեսիլները վանում Կենաց Ծառի  
ճյուղերով, իրենց ընդարմացած  
ծեռք ու ոտքով անցնում հազար  
սահման, այն էլ՝ քամու արագությամբ...  
Սիրելի նախանձ մարդիկ,  
Հանձարները չեն մոլորվում:  
Նրանք հալածվում են, բայց նորոգում՝  
ճամփան դեպի Ճշմարտություն...

09.06.07 թ.

այնքան լուսեղեն, այնպե՛ս զվարթուն...

Օ՛, մաքուրի տուն,

Օ՛, իմաստուններ, որ պիտի տեսնեք

Օրը այն արթուն...

19.07.07 թ.

\*\*\*

Հույս ավետումի  
և հրաշալի նռնենու այգի,  
առավոտների լույս փերիներն են  
պարում բույրերում,  
յոթնագույն պահն է  
կամարը կապել երկնի թևերին,  
կանչում է երգով ու գինով արբած  
իր թագավորին-  
ուրախությունից լուռ հեկեկալու...

25.06.07 թ.

\*\*\*

Երկնքի հետ  
խոստացված երկխոսությունը կայացել է,  
ամենավստահելիս արյունս է-  
ինչ կարդում ես-այդ եմ ես,  
արյանս ցավն է գրում.  
հաստատելու ինքնությունս...  
Երանի՜ հազարների փոխարեն  
Միայն դու հասկանայիր...

03.07.07 թ.

## ԹՈՂ ՈՒՇ ԿԱՆՉԻ

Առավոտը կանչեց ճամփորդության:  
Ջովություն էր ճամփասկզբին  
ու ճամփան այնքա՛ն էր հին.  
որքան լայնահուն ներդաշնակությունը...  
Անեզրության ափից  
մի անանուն պտուղ քաղեցի՝  
որպես կեսօրվա ճաշակելիք,  
պտղի կորիզը  
անջնջելի հետքեր կթողնի  
Կեսօրի սրտին,  
կդառնա վեհից վեհը,  
որոնողից-գտնողը,  
տարբերակներից-կայացած ծեսը,  
գրքից-ամենակարևոր էջը,  
սահմանից-անսահմանը,  
Գոյի մարմնավորումը-  
նախահիմքի դռանը,  
սրբազան խոսավողը-  
մշտնջենական համամասնության...

Միայն Երեկոն ուշ կանչի,  
նրա գրկում երկու սիրող թռչուն  
կտուց-կտցի  
ժամանակի անցնող  
փետուրներն են պրկում:  
Նրանցից այն կողմ՝ անդորր է,  
մտերիմ խոհերն են  
էներգիայի իններորդ աստիճանի,  
բայց... թո՛ղ ուշ կանչի...

21.06.07 թ.



## ՆՐԱՆՑ ՊԱՏՄԵԼ ԵՄ ԶՐԵՐԻ ԺԱՄՓԱՆ

Հատկացված տեղը փշոտ, քարքարոտ,  
ինքնընկալունը՝ անվրեպ որսորդ-  
անսահմանի մեջ որսում է, դողում,  
սրսփում, խոսում և տեսլաժամերն  
արդեն աստղերում անհմանալի,  
սրվակների մեջ իրենց պահերի  
կենդանի ջուրն են լցնում, որ պահեն.  
Կտուցներում հույս-ծիծեռնակների՝  
ուղարկեն այնտեղ՝

վաղանցիկության սրահները հաշտ,  
որտեղ չպետք է սերը կործանվի:  
Շուրջբոլոր ցավն է վստահ թաքնված,  
թույլ վայրկյանները նրան են գերի,  
երբ նրա դժգոհ էջերն են բացված:  
Հավերժի զմրուխտ ամառները հար  
կգրկեն տխուր երգերը հոգուս  
ու լաց կլինեն լիալուսնի տակ...

Ի՛նչ վիճակներ է այդպես նախօրոք  
ծրագրել Աստված,  
մի ոսկեթևիկ հրեշտակ ինձ մեկնեց  
քարտեզը հոգուս.

անհասանելի տեղանքներ ինչքա՛ն,  
քանի՛ իրական և անիրական  
սահման են անցել՝ ոչ ոք չգիտի,  
քանի՛ օտարի մոտ հյուր են եղել  
ու պատմել նրանց ջրերի ճամփան,  
ինչպե՛ս է գոռոզ քամին պարեցրել  
նավերը՝ նման նվազարանի.  
արտոնությունը տալով այն մեկին,

## Erhebung

Հնա՛ր տրվեց վեհանալ,  
հնար տրվեց ախտահանել  
մուլասերմերի հոգիները սև...  
Ինչպիսի՛ պարզև,  
փա՛ռք այն բրուտին, ով որ արարեց  
կմախքս կավե,  
և անչափելի տեսողությունս՝  
մտազննության սենյակներն անթիվ,  
որոնց մեջ լի՛քը ժպտուն մանուկներ  
մրջյունների պես վազվզում են խենթ  
և ամբարում են ծավալի հանգեր,  
ապա հազնում են ժիր ոտնամաններ.  
սլանում վերև, իջնում են ներքև,  
լուրեր են դարսում հանց ծաղկաթերթեր  
շուրջը շուրթերի - նեկտարոտ, մեղրոտ,  
ստիպում նրանց ավետել քաղցրի  
ծլարծակումը անմեղ կոնքերում...

Ես տեսա՛ աստղը,  
Նրա կրծքի տակ պտուղն է աճում,  
Որ պիտի ծնվի վարելահողից  
Անբիծ սերերի  
Եվ բացի դռներն անհնարինի...

Երանի՛ ժամն այդ...

04.08.07 թ.

## ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱՅՆ ԾԱՂԻԿԸ ՉՏՆԵԼ

Այնքա՛ն մաքուր է այս ասպարեզը՝  
տվածը ցավի.

խորունկ, տոնազարդ ու կամարակապ,  
կամրջակն անտես կապում է ափին  
կորած իրերի, անդարձ սերերի  
հիշատակների դեզերը հրկեզ,  
հսկողությունը վարդենիների,  
համբուրում է թույր, ոգի ու պարտեզ  
և մոռանում է բլբուլին ասել.

ի՞նչ թաքուն տաղ է գիշերը նրան  
արևագալի հետ ապսպրել...

Առաքելության շնորհը վերին  
աճում է ծաղկանց իմաստուն խորքում,  
մինչև օրորի քեզ ձեռքը մահի -  
հարկավոր է այն ծաղիկը գտնել:  
Որոգայթների աղարտությունից  
հեշտ է խուսափել, եթե թևերին  
քերովբեների, սերովբեների  
քո սրտից պոկված  
մի-մի փետուր ես ավելացրել...

Հարկավոր է այն ծաղիկը գտնել,  
որ հոգուդ դաշտում նա հղիանա  
ու ծնվի անքուն բացարձակի մեջ...

09.08.07 թ.

\*\*\*

Ափսոսանք ու սպեղանի:  
Փողոցների ռիթմի տակ  
ճնռթվում է նարդոս ծաղկի սիրտը վհատ,  
հոգին երկնի ճանապարհին լաց է լինում...  
Չհասցրեց սպեղանի դառնալ,  
կսկիծը կրծեց անունները թանկ`  
հաճոյանալով քառակուսիներին...  
Լուսինը ցավից իր առանցքի շուրջ  
կպտտվի մի օր...

26.07.07 թ.

## Ո՞Ր ՀԱՅԵԼՈՒ ՄԵՁ

Մենակ եմ հասել ափը կարոտի...  
Իմ ներկերն առած  
վրձնեցի ծայնը ուրիշ մրմունջի,  
ուրիշ գույների խառնեցի հոգիս,  
ուրիշը կերավ իմ աղուհացը,  
և կտավներս  
հիշողությունից ու ցավից արբած -  
սահեցին, անցան սահմանը մահի,  
սկիզբը տխրեց, քաշվեց պատյանը,  
վախճանը կորցրեց մեղրահացը իր,  
արծաթ բարուրը լուսինը քանդեց  
մերկ ու հուսահատ թողնելով դարձյալ  
անեզր սիրուս հույս-պատասխանը...

Մենակ եմ հասել ափը կարոտի...  
Որտե՞ղ է հիմա,  
ինչպե՞ս է ծաղկում,  
ո՞ր հայելու մեջ-  
իմ անմեղ սիրո արտացոլանքը...

02.08.07 թ.

## ՉԵՍ ՀԱՄՆԻ

Ինչքա՛ն է անցել: Չե՛ն համրել: Չգիտե՛մ:  
Ցուրտը գրկեց մարմինս տաք:  
Ինչքա՛ն է անցել: Չե՛ն պաղում: Չե՛ն պաղի:  
Սրինգը երգիս հնչում է բարկ:  
Ինչքա՛ն է անցել: Գնացիր: Է՛լ չեկար:  
Թույլ տվիր մենակը ինձ ուտի:  
Ինչքա՛ն է անցել: Չե՛ն հաղթվել: Չե՛ս հաղթի:  
Լույսի պալատում կնստեմ քե՛ֆի:  
Ինչքա՛ն է անցել: Դայլայլեց ու երգեց:  
Թռչնակը արդարից առաքված:  
Ինչքա՛ն է անցել: Երվնագիր երգերս  
Գիշերով գալիս են քեզ այցի:  
Ինչքա՛ն է անցել: Կարդո՛ւմ ես: Արտասվո՛ւմ:  
Թաքցնում հայացքդ նրանցից:  
Ինչքա՛ն է անցել: Ելնում ես ու գալիս:  
Չե՛ս հասնում, չե՛ ս հասնի, սիրելիս...

26.07.07 թ.

## ԿԳԱՄ ԵՍ

Ինչ-որ մի դարի  
ինչ-որ անտառում կամ սարի լանջին,  
մոմերով զարթուն չքնաղ մատուռում,  
վարդենու այգում, նռան ծառի տակ,  
դաշտերում վայրի ու անապական,  
արարողների բոհեմում խոսուն,  
խորախոր ծորի մթին քարայրում -  
որտե՛ղ պատահի, ինձ ժամադրի՛ր...

Կգամ՝ ես, կգամ՝,  
ինչպես հուլիսի մեղրը  
վեցանկյուն սենյակների մեջ  
թևաբախումի իմաստն է հագնում,  
ու հասունացնում քաղցրի բառերը,  
որոնք գալիս են լույսի ուղղությամբ,  
շոշափում քիմքը ոսկե վարդերի,  
ապա աննկատ նստում մեր լեզվին,  
հետո առկայծում թագուհի ծնված  
հանգերով երգող կանանց նռներին...

Կգամ՝ ես, կգամ՝,  
ո՛ր դարն էլ լինի,  
մտահայեցման զորավոր հովտում  
աճած, զորացած բազմախորհրդով,  
մտերիմ դարձած շրջադարձերով,  
բերկրանքով լեցուն ընկալումներով,  
նարնջագույնի ներշնչանքներով,  
քամիներ սանձող լեռների ոգով,  
և այն հիմներով, որոնք երգել են  
անձրևների տակ սերերը ծաղկած...

## ԵԼՔՐԸ - ԱՉՔՆ Է

Դռանս շեմին- օրը անհայտով,  
ջուրը – հեկեկանք,  
ջութակը- անձրև...  
Ո՞վ է վախեցրել նժուգին պարող,  
որ մոռացել է իր վրնջոցը  
առավոտների մանուշակագույն  
շնչառության մեջ,  
երեկոների այրող երթերում,  
միջօրեի վառ դաշտում կապուտակ`  
տերեփուկների դաշտում, ուր ազա՛տ  
ոգեկոչում էր համանվագի...  
Նժույգն էլ չկա՛...  
Կա ժամանակի ոտքերին կապված  
խեղճացած յաբու,  
որի աչքերում դեռ նկարված են`  
ջութակն ու երգը,  
անձրևն ու ջուրը,  
ջրահարսերի պարերը գունեղ,  
ու տարածության չափումը հոգով...  
Ելքը - աչքն է,  
նո՛ր տեսողություն,  
նոր ճիչ, նոր անցում,  
նո՛ր աղոթածայն`  
անաղարտ երգի սուրբ ներկայությամբ...

21.07.07 թ.



## ԷՈՒԹՅՈՒՆ ՅՈԹՆԱՆՎԱԳ

*Միրելի Բելլային*

### Ա

Էությունը փրկությունն է  
մեր քերթության ճամփին,  
քչերն են մոտենում նրան,  
սակայն, արժանավորը սերմ է ցանում  
կայացման շեմերին,  
ժառանգված մահը կարևոր չէ,  
ամենակարևորը  
սեփական անունը արտասանելն է՝  
մութ ստվերներից չվախենալով,  
սեփական բարձունքի նուրբ շողերի տակ.  
մնացյալը թող մնա լռությանը,  
նա կվերադարձնի բարձրացող ծաղիկը,  
մենք կհամոզվենք՝  
միայն Մահն է հիշեցնում  
Կյանքի մասին...

### Բ

Էության գիտակները  
տիեզերական ծառի մեջ են,  
հոգենյութը սնվում է  
անդրբանական սիրո սնունդով,  
ծարավ չկա, ջուրն անսպառ է,  
եթերում չկան վիրավոր հրեշտակներ,  
չնայած նրանք  
թևերով իրենց ավլել, սրբել են

(Էլիոթի քերթվածի կնոջ պես),  
նվագում եմ երկու ծառերի  
միասնությունից մինչև խաղաղությունը  
ուրիշ մի մահի,  
նաև հիշում եմ հին գույնը մաշկիս:  
Առաջին լարը հուժկու է այնպես,  
ասես նոր նավ է մեկը կառուցում  
ու հաղթողն է նա,  
երկրորդ ծայնի մեջ մերձավորներն են  
նրա մաքրաթև ու անապական,  
երրորդ ծայնն ամուր, երկնքի թևից  
ծիթենու բարակ մի ճյուղ է պոկում,  
հաշտության դաշտում հնչում է շունչը  
խաղողի որթի և հանգիստ երթը  
հաջորդ մեղմ ծայնի,  
մինչև նկատվի նյուս ծայների  
համանվագում-դժվար մոտեցում  
իրենից լավին ու արյան գույնը  
դաշտի քարերին ու ծաղիկներին...

Շրջապատույտ է անկանոն, անկանգ,  
Ե՞րբ այն կավարտվի...  
Դարձյալ նվագում ու խնկարկում եմ  
խաղաղությունը ուրիշ մի մահի...

## Ե

Էության ընդարձակությունը,  
Փառքի ոսկե աշտարակը,  
Վերև բարձրացող սանդուղքները,  
Հրեշտակների անքուն հսկողությունը,

## Է

Էությունն անժամանակյա-  
միշտ եղած  
գոյության ընկալումով արբած  
պայծառատեսների երազներում,  
միշտ եղող  
երկնային ոլորտներում անասացության,  
չարը չի կարող հաղթել  
հաղորդակցության ծավալը...  
Իմ աստղերն ինձ տվեցին  
պտուղն ալոճենու  
և ծաղիկը՝ քրիզանթեմ,  
իսկ լոգոսի աստվածային ոգին  
պատվիրեց՝  
հավատարմություն - Հացին և Գինուն,  
լայնարձակ է Քո խաղաղությունը,  
դողանջները խոսքի՝ հոգեպարար,  
ընկալման զվարթությունը՝ լույսի սպասում  
և ավետում լույսի ամենուր՝  
Քո ներկայությամբ...

30.06.07 թ.

Այլևս երբեք անմաքուր սիրո  
կեղծ ճառագայթը սիրտս չի շանթի -  
խառնիմաստ այնքան, այնքան տմարդի,  
թանձրացող ծխով ժամանակների:  
Այլևս երբեք մռայլի դևը  
թակարդ չի լարի  
խոհերիս բանուկ խաչմերուկներում...  
Բացարձակ Լույսը ճշմարիտ Սեր է  
փռել ճամփեքիս.  
և՛ սերն առ Աստված- ամեն ինչի մեջ,  
և՛ սերն առ սերը՝ միակ այրմարդու,  
այլևս երբեք չեմ կասկածելու  
միակի մաքուր, մաքուր ապրումին,  
որ շռայլորեն բացել է իմ դեմ  
ցոլացումները առավոտների.  
անսահման, հեռու,  
ուր կեսօրները  
անափն զգալու հաճույքի ցավից  
ուշաթափվել են երկնային հովտում...

Ա՛խ, եզերքները այն լավ պահերի,  
իրիկունները իմաստով լեցուն,  
հնազանդության հետքերը արթուն  
անթիվ խորքերի,  
որոնց դռները իրենցից անկախ  
բացվում են իմ ալ շուրթերի վրա,  
և անիրական եզր են որոնում -  
իրական դարձած  
աղոթքների մեջ հարատև հնչուն...  
Եղեգնիկ եղած սրինգը  
փառքն է քերթության երգում,  
ու սեղան բացած՝ որպես սուրբ գինի,  
արեգակներ է շարում սեղանին...

Աչքիցս առաջ է իմ մանկությունը  
եղեռնից, գաղթից խեղճացած մի տաստ,  
բռնության դժոխքում զոհված պապ,  
զօրուգիշեր աշխատող ծնողների,  
բայց...

զնգում, երգում է մի աղբյուր,  
իր պարզևներն է բաշխում  
մի որդի, բզեզի, մի օձի, մի ծաղկի,  
ապա միանում շուրթերիդ կանչին...  
Եվ ժայռերը վիթխարի են թվում,  
արծիվները՝ գառ փախցնող,  
անդունդները՝ անհատակ իրադարձություններ,  
երկինքը՝ ծավալուն, ձգող,  
բարդիների պուրակը՝ փերիներով,  
հրեշներով լեցուն մի անտառ,  
որն այնքան բարձր է շնչում,  
որ ոչ մի միջնորդ հարկավոր չէ՝  
զգալու նրա խորհրդավոր  
առաքելությունը...

Հայտնվում են ակունքի մոտ,  
ապա սկսում ընկնել, բարձրանալ  
բոլոր պարունակներում, բոլորակներում,  
ի՛նձ հասանելիք երկինքներում...

Այլևս երբեք չեն դառնա կարոտ  
պաղ տանիքներին,  
անմեղությունը թող հար նվագի  
մեղվափեթակի տոնայնությունում  
ու հառնի հրաշքն անթիվ իրերի,  
որոնց գոյության նախաշենքերին  
սև ագռավներն են կռավել վառման,  
բայց չեն վիատվել նրանք չար ուժի  
խոտորնակներից,





\*\*\*

Ո՞վ ձայնեց շնորհի շողերի սենյակից՝  
դասավանդելու հաղիսավոր  
ծլարծակունն անկողիների,  
ավետելու ոգեղենությունը  
ճակատագրական շուրթերի,  
ընծայունն ըմպելու՝ որպես էություն  
կատարյալ բերքահավաքի:  
Բարձրահույզ լռություններում  
ստեղծվում է կմախքը նպատակի,  
ծավալի ականատեսը  
երկար է ճամփորդում մինչև ընկալի,  
խոսելատենչը ապավինում է  
իրադարձության մակընթացությանը  
անվերջ հետազոտելով  
հրաշք ձևերը փոխակերպման:  
Հավվում են կեղծ եզրերը,  
անհանգստությունը խոտորված հոսանքների,  
ճեղքված փոթորկի սիրտը,  
հեղեղատը հանցանքի:  
Ստեղծվում են ջութակածին խոստումներ՝  
երեկոների երգերի հասունությունը փորագրելու-  
հեզության օրենքների աչքերին...

Ա՛խ, Լեռնուհու առավոտ:  
Քո քամին հպարտության  
մենություն է քարոզում,  
որ խաղաղ հոտերը հովիվը չկորցնի  
ծավալների խառնակ օթևաններում:  
Դարպասների բացի՛ր,



տիեզերական մարմինների  
գիշերային խրախճանքների բեմում՝  
հանց իմաստուն ծաղրածու:  
Ասվում են բառեր, որոնք նախաստեղծ են,  
բայց անհասկանալի:  
Մնացած կերակուրը  
առավոտն ու Լեռնուհին կճաշակեն.  
սուփրան՝  
ոգեղենը բեղմնավորող անձրևի երգն է՝  
ժամանակի երգեհոնին բազմած...

ժամանակի գետը,  
ժամանակի գլաքարի ողորկությունը,  
ժամանակի մամուռը  
անցնում են ժամանակի սրտի միջով,  
արթնանում մի պահ ժամանակի կղզում,  
ցատկոտում հաճույքից՝ նորը տեսնելով,  
հաճախ էլ մոլորվում՝  
մարգարտածին խեցիների  
երանելի ցնցումներում:

Տիրապետությունը փորձառու ձանձրույթի  
չի՝ կարող չխոնարհվել ծղրիղների սոնատների,  
ալիքներից քշվող առեղծվածների առջև,  
որոնց խոյանքները  
աստղային ճամփաների խաչմերուկներում  
գրկախառնվում են մաքուր արցունքի  
շնչառության տոնախմբության հետ,  
և վաղանցուկ համարում՝  
դիմակների մնջախաղի վտանգը:

Լապտերի կուրծքն են լվանում  
պատգամները լուսե լայնությունների,

Հապաղումը կդանդաղեցնի քայլը  
ուրախության սուրհանդակների,  
որոնք նոր են դուրս եկել  
ցորենի արտերից և խնդրել  
մորելխների ազահությանը՝  
չոչնչացնել գույնը կյանքի:  
Ամեն ինչ լողում է  
իր պահի լճակում,  
որտեղ մերկանում են  
անսահման ցանկությունների  
առասպելները  
և արևահարում իրենց բարեմասնությունները՝  
նռան գույնով:

Արտառոց ոչինչ չի՞ եղել...  
Կասեմ՝ եղել է.  
Հավասարակշիռը  
ներդաշնակի օրենքն է հաստատել՝  
ուլորտների, ուժի, գույների,  
ծնունդի ու մահի վրա:  
Ջորավոր գործի ակեբախությունների մեջ՝  
ատելությունը, թախիծը, գեղեցկի զգացումը,  
պտղավորումը.  
տարբեր գույնի թռչուններ են եղել,  
նրանց թռիչքը  
մինչև ժամանակի այս հատվածը  
ուղեկցվել է աստղերի հուր սրտերի  
բռնկումների լույսով:

Ապահով թռիչք:

Ուշացած թռչուններ կան  
հեռավոր ամպերի կարոտների վրա,

*և՛ տիեզերքի աչքերում»:*

Տատանումները ցատում են առաջացնում  
արյան լաբիրինթոսներում,  
շտապելու մեջ մահ կա,  
անվերջ վերադարձը սնում է  
պարը Լեռնուհու:

Շարժումը չի ճանաչում նախապաշարում,  
ստեղծագործ ծեփծեփումներն  
իրենց ընդերքի սկզբնաղբյուրն են  
պեղում և լվանում վերածննդի դեմքը:

Հանելուկների ավազանը պետք չէ  
մեկուսացնել. հարկ է հարստացնել  
տրամաբանությամբ ներծծված ձկնիկներով,  
որոնք կերևան մինչև ավազանի հատակը  
տեսանողներին:

Տեղատվությունը չի անհետանում,  
նա ավարտ չէ,  
նա ակնարկ է՝ նոր զգայության,  
նոր դիտումի, նոր համոզմունքի,  
սիրո նոր գիշերի...

տեղ են հասնում փոթորիկը հաղթած  
սակավ նավաբեկյալներ:  
Ափը հզոր է...  
Այնտեղ չկա հուսալքություն,  
անարժեքություն, անհետացման վտանգ:  
Կատարելության ծաղիկը շնչասպառ է  
ուրախության շիթերի ջրվեժից,  
վայելքը հորինում է համատիեզերական  
պոեմներ ու շարում՝ աչքերի, մատների  
արթնացած երազներին:

Հյութեղությունը ծառ է՝  
հոգեկոթի անձրև,  
երթի ելած կոկոն՝  
հասպիսե շուրթերով:  
Հոգու կրակների տոնը  
չի խանգարում շնչառությանը  
մինչև վերահաստատված թևը եզերքի:

\*\*\*

Երանի՛ փետրավոր Հավքը գտնողին  
ու երանի՛ ասողին,  
քանզի նա է տեսնում, շոշափում իմաստը  
և կտակում ջութակը երկրպագության  
ինքնամոռացությանը նվիրման:  
Հրեշտակներն ինքնաբուխ կամեցողությամբ  
վարդեր են թռցրել  
կեցության ոգու հարաճուն պարտեզներից  
գերագույնս զարդարել  
նավակները սիրո սրբազան:  
Լուսեղեն մրմունջները  
նրանց հոսանքով գլորում են դյուրընթաց՝



## ՆՎԱԳ ՑԱԿԻ

Երանի՜ դույզն-ինչ հասնողին:  
Արդյոք ու՞մ հոգին, ու՞մ հոգին էր, որ  
գրկեց բողբոջի տրոփյունը  
և ազդարարեց՝  
տարածությունը,  
բարձրությունը,  
հաղթանակների անհագությունը,  
Բլբուլը ոսկե,  
ոսկե ձկները,  
ակունքը քաղցրի,  
հառաչանքները  
լուռ քերթվածքների,  
ինաստնությունը  
ստնտու կամքի,  
ձայնասահմանի ներկայությունը-  
ին թևերին են նրանք,  
որպես համբույրի շքեղ խրախճանք:

Տարածությունը բարեպաշտության,  
խառնված մտքի պատվին անաղարտ,  
Աստծուց առաքված երակազարկ ունի՝  
անթերի, անքուն, պարզ ու համաչափ:  
Քանի՜ հազար օր անցել է արդեն  
ու քանի՜ հազար դեռ պիտի անցնի,-  
սովորականի սահմանների մեջ  
չի տեղավորվում՝  
թռիչքը սրտի երանության,  
թռիչքը մտքի սլացքի,  
թռիչքը հավատի հիշողության,

մեղավոր ժամանակն իր գլուխն է կախում  
քարաղբյուրների գուռերի վրա:  
Լվա՛ մագերդ, երեսդ լվա,  
և՛ թափ տուր փոշին  
քո հագուստների կեղծ կղզյակներից,  
որ լինելությունն են դարձնում երաշտ՝  
որք մրցասպարեզ, ուր հոշոտվում են  
առագաստները ձանձիրի կողմից:

Փրկո՛ղ առագաստ, Լեռնուհու՛ վարսեր:  
Կայնը՝ ջաղացվարդ- ծնված ցորյանի  
ոսկե մակույկի նավարկությունից,  
հեռվում ծփացող համբուրավանկից՝  
ի հատուցումն առկայծող, պեծող,  
մշտածոր երգի:

Երանի՛ լսողին:

Դու ի՛մն ես հավետ, հավատի՛ կշիռ,  
շնչառություն ջերմ,  
հուսագեղության լուռ աղերսներում  
և նվազներում վառ զգոնության,  
երբ բացվում ես քո սիրո պարտեզում,  
աշխարհը մի նոր գույնով է ներկում  
գոյությունը իր և նստում հպարտ  
ինացության լայն գահավորակին՝  
որպես Թագավոր իմ երագների,  
որոնք ձգվում են համբուրատենչից  
մինչև խենթություն ոգեշնչության,  
որտեղ ծուլվում են վանկաչափերը  
հավերժ գոյության:

Տոնախմբության առիթ է նինջը  
չարի ստվերի,  
քանզի խանդավառ գույնը կհասնի  
մտածողության էգ ձիու սանձին  
և ցնցումները արշալույսների  
կբացեն գաղտնիքն իրենց կողերի:  
Գովերգվող ոգին համաչափության  
կասի, որ ի՛մն ես, Վա՛րդ իմ սիրածին,  
կոկոնիդ մեջ է ուղիս սկսվում  
և ավարտվում է հառաչանքներիդ  
կրակի կողքին՝  
հավատարմության անվերջությունը  
դրոշմած սրտին:

Անկեղծ գիշերիդ սթափությունը  
աստղերի ներքո  
վկայություն է՝  
իջած երկնամերձ բարեհաճության  
փեշերի փառքից  
և հոսանքները հոգենվագիդ  
անվախճան խոսքով ադամանդափայլ

խեղդող օղակ է հենց ինքն իր վզին  
ու ինքը իրեն հաղթահարելով  
մեռնում է մենակ, բայց...  
գարշանքի հոտն աղտեղություն է  
սփռում ամենուր,  
և զգուշություն, ի՞նչ զգուշություն  
պետք է ես երգեմ, որ անգամ փուշդ՝  
կողդ պաշտպանյալ-  
չգահավիժի որջը թմբիրի:  
Ճիշտ է,  
գիշերը շրջապատում է քեզ մութի ահով,  
բայց լուսաբացին զղջունը որպես  
ցող- խորհրդանիշ շուրթիդ է դնում,  
որ հնազանդվես արևի լույսի  
համբույրի ծեսին:  
Քո հնազանդն եմ,  
բայց կարեկցության համար չեմ ծնվել,  
մի՛ կարեկցիր ինձ, այլ փոխարենը՝  
ինձ գալու պահը  
ճիշտ դարում ընտրիր:  
Գիտեմ, որ կգաս ու հայտնությունդ  
օդի աղմուկ չէ,  
ու արտառոց բան չկա դրանում,  
կա ճախրանք Լեռան,  
և անապատը փեշերն է քաշում՝  
որպես կասկածանք իր ավազների  
մթին գործերի:  
Սրտիդ խառնարան-խենթություններում  
ուղիդ կհարթվի  
և կանուցվի քո երկնից կաթող  
իմաստ - խորհրդով,  
կհաշտվես քեզ հետ,  
ու կվստահես ինքդ քո հույսին,



նրա խորունկը օծված է  
մեղմիվ երաժշտությամբ  
և կախարդական զանգերի կանչով,  
ներկայությունը այս վերջինների  
միշտ արթնացնում է ավետիս հոգում,  
ու հյութեղության, բարեպաշտության  
հզորությունը  
վերեններում է հարսանիք անում,  
այնտեղից հոսող աղբյուրն ակունքի  
երգ է գլորում.  
արարման աղերս, կենսության թրթիռ,  
կարծրության համի կամքով՝ հաղթանակ,  
բաղձալի տենչանք անլսելիի,  
անորսալիի որսված գոհություն,  
կարոտի մթնշաղ՝ տավղահարների  
արգելանոցում,  
ողջախոհության ցնցող երկրաշարժ-  
չար հոգիներում  
և օրհներգություն՝ ազատ թռիչքի...

Ազատ թռիչքի նախազգացումը  
քո մեջ է նաև, նաև՝ երկուսիս...

Դու՛, ի՛մն ես հավետ, Վարդ իմ ցանկալի,  
ինչպես թռիչքն այս՝  
տառապանքով լի »...

աղաղակներն ու ոռնոցը վայրի:  
Ամբոխը ճղճիմ ցանց է ճանճերի,  
ամբոխը սիրո երանությունը չի տեսել վերի,  
նա պատերի տակ գուգավորվել է  
շների նման  
և անասնական ցնցումների հետ  
ուղեղն է կորցրել-  
ջրափոսերի նեխած երախում:  
Երդունների դաշտն այնքա՛ն է հեռու  
հիմար դիպվածի մոլորությունից,  
որ պա՛ղ է, պա՛ղ է նրանց մեջ ընկած  
ժամը միջանկյալ՝ ծավալն անարվեստ:  
Երդումի դաշտը  
անարդարության ջրհորի փորում  
բազում դույլեր է խեղդել մոլեգին,  
որ նա չջրի հոտերը ծարավ:

\*\*\*

Բլբուլն ի՞նչ անի,- ասաց Լեռնուհին,-  
ես պիտի կկրկնեմ երգը Բլբուլի  
Ի՛մ Վարդի համար,  
երբ կնվաճեմ բարձունքը Երկնի,  
ամբոխի համար խիղճ է արարում  
երգը Բլբուլի,  
բայց կաղապարը լերդացած արյան,  
առանց ուղեծիր,  
առանց պտույտի,  
կընկալի՞՞ արդյոք  
կարեկցությունը իր սփոփողի,  
չիտակությունը օտար է նրան,  
կոպիտի, նենգի ոտնամաններով  
նա պղտորում է գետը արարման,

անվախ հաշտեցնում է՝  
դանդաղն ու վագքը,  
ուշիմն ու մոլորյալը,  
Երաշտի շրջանն ու անձրևների  
քնքշանքի վարագույրը...

Հետո կբացվի,  
կբացվի՝ գրված առակը անմահ  
նոր աստղեր հագած նոր երկինքների,  
առածի ուժը հույսը կբերի  
դեպի իմաստուն մեներթյունը քո,  
որի ծաղրածուն տխրությունն է այն,  
որին չես փոխի ոչ մի խորհրդով:  
Հարստությունը. որի անունն է  
նյութ և նորից նյութ,  
լուկ կհարուցի քնծիծաղը քո:  
Տխրություններդ  
վիճակներն են քո ամենաուրախ.  
ունկդ սրվում է ,  
աչքդ սրվում է,  
հոգուդ սահմանն էլ՝ չի չափավորվում -  
ամեն մի ծայնով,  
ամեն մի հոգնած աստղի պայթյունով,  
ամեն մի ծնվող նոր իմաստունի  
երկնած աղոթքի շրշյունի հանգով,-  
բացահայտումը անցնում է արդեն  
տխրության բակով:

\*\*\*

*Ծնունդիս պահին,-խոսեց Լեռնուհին,-  
խոյը իշխում էր Ա համակարգում,  
թագավորություն,  
որտեղից դուրս էին մղվում  
խոյավարի չմտածող գաղափարները:  
Երկրի վրա ոչ ոք ուրախ չէր:  
խոյը բառաչեց և վար առաքեց  
հաշտություն՝ ծնողի և ծնվողի միջև:  
(Ծնվողը հյուծող ցավը տեսել էր*

նրանք վայելում, վայելելու են  
և միշտ են ասելու. «**Կոյր հավատը սպանում է,  
կոյր հավատ մի՛ ունեցեք**»...

Ու՞մ հանդեպ կոյր հավատ՝  
Աստծո՞, աստվածների՞,  
նյութի շարժման ինքնական կարգավորման,  
հավերժի ուղո՞ւ, Մարդ- ընտրյալի՞...  
Կասեմ՝ ամեն ինչի:

Կարևորն անկարևորից տարբերող շողը  
լեռների մեղրի հասունության մեջ է:  
Ցավից հասունացած ծնվեցի,  
մեղրը կերա-հասունացա,  
ապա ընդամենը  
վարդի մի թերթիկ վար ընկավ  
ու չքացավ երկյուղը,  
զարմանքը մեծացավ, գրկեց անչափը  
և գլխապտույտը հոսեց աշունների  
բերքահավաքի ոսկե ամբարը:  
Կասկածի կայանները ներկում են,  
որ հեռվից հեռու նկատվեն  
ու վերածնվեն,  
խրատաբանությունն ավելորդ է,  
ընթացքն է կարևոր,  
այդժամ սայթաքումներ դեպի  
ամբոխի մտածողությունը չեն լինի:  
Սարերի մեղրը,  
քարերի տակ թաքնված առասպելների  
մեղրը ես կերա ու մարտնչեցի.  
չասեմ խավարի դեմ, խավարը ոչինչ է,  
ասեմ՝ ինքս իմ դեմ...

տեսածս գույները խառնեցի  
աչքերիս ու ժպիտիս,  
նայեցի մարդկանց՝ հրա՛շք էր,  
մինչև երեկո հարյուր մարդ  
երջանկացավ,  
նրանք չգիտեին, թե ինչի՞ց է դա,  
նրանց տրված էր արդեն ճիշտ տեսնել  
ու ճիշտ գնալ,  
չասեք՝ ինչո՞ւ լաց եղա,  
արցունքները պետք է թափվեին,  
դառնային առու և ինձ ուղեկցեին  
հաջորդ հարյուր հոգու դռները:  
Նրանց շեմերին բախտի ակունքը  
նկարում էր ներկա՝  
առա՛ջ՝ մինչև ի կատարում անուրջների:  
Հրով բռնկված, լույսով բռնկված  
Աստծո հանգրվանը, եռացող օվկիանը,  
վարդի մեն մի հատիկ թերթիկը,  
ինքս իմ դեմ մարտնչելն ու հաղթելը,  
ինձ թույլ տվեցին ըմպել  
գիշերացողի իմաստնությունը:  
Մի՛ կարծեք, թե քաղցրն է:  
Ո՛չ, տառապա՛նքն է:  
Ես ըմպել եմ իմ գավաթը,  
բայց ոչ լրիվ, ինձնից հետո էլ պիտի խմեն,  
խմեն, որ ասեն.-Սա՛ տառապանքն է:  
Ես ընդամենը վերելքի մի աստիճանն եմ,  
որերորդն եմ՝ չգիտեմ, բայց  
բարձրանալու ճանապարհ ունեմ,  
դեռ շատ աստիճաններ,  
մարդկանց ասացող-աստիճաններ են  
հարկավոր, որ երբեք չմոռանան  
վեր ելնել:



## ՆՎԱԳ ՍԻՐՈ

Շնորհանդէ՛ս եղա՛վ.

ընծայաբերում տա՛ք ակորդների,  
նրբակար հյուսվածք երգեհոնային,  
նոր սովորույթներ մտքի պահվածքի,  
հրաշքի գունեղ փոփոխություններ,  
որոնք չէր կարող ալքիմիկոսն իսկ  
ստանալ փորձով...

Ոսկեփոխություն՝ն, ոսկեփոխություն,-  
ճչացին որոնման բոլոր թռչունները  
և ապաստան հյուսեցին  
ցայգալույսի ճյուղերին՝ պահպանելու այն:

Ձևականությունն իսպառ չքացավ՝  
որպես հանգազուրկ ստվեր մի մթին,  
քարերի ձեղքից, մողեսի բնից,  
ծաղկանց հուզմունքից,

նրանց տևական լռության գրկում  
անաղարտության համբերությունը  
սկսեց ծփալ և հնազանդվել  
քարի աղոթքին,  
սեփական տունը անխարխուլ պահող  
քարի աղոթքին:

Սերը ավետեց իր լինելության  
ոսկետեսիլը,

նա տվեց այնքան ի սկզբանե,  
որքան տալիս է մայր Արեգակը  
իր շուրջ մեծացող խենթ գավակներին:  
Ո՞ր եղանակն էր աշխարհում տիրում  
հանդարտաբարո,  
հանգույց էր քանդվել արևելքի մեջ,  
խլահավերի պահն էր խլացման,

բարալիկ ճամփա  
ու դո՛ւ, ուրա՛խ ես, քո ճամփին վայել,  
ազնվական ես դառնում նրա հետ:

\*\*\*

Ո՞ր եղանակն էր աշխարհում տիրում.  
գարո՞ւն էր, աշո՞ւն,  
խորհրդանիշների հերթափոխը  
կայծակում էր հեզ, ամպրոպ չէր սակայն,  
արբեցման ճանաչ գարնանաբույրն էր  
արշալույսներում ծաղիկներ ցանում,  
ու խոսում էին թիթեռներն անքուն,  
առանց ընդմիջում խոսում էին  
ու բարձր ծիծաղում  
ծաղկանեկտարի ասպարեզներում,  
նրանց ձայնն անուշ, ծիծաղը զնգուն  
առասպելների հիմնաքարերին շրայլում էին  
մասունքներ դեռևս անհայտ մի լեզվի,  
որի այբուբենը համադրված է  
լույսի սաղմոսներ երգող թռչունին:  
Լարի պես ճամփան գրկել,  
տանում էր արդեն երկուսին,  
ովքեր ճանաչում էին՝  
Սերը Բացարձակ:

Իմ թույլատրելի սահմանը՝  
ափերիս ծառերի ճյուղերն են,-ասաց Լեռնուհին,-  
որոնք շարունակվում են  
իմանալիի և անիմանալիի ոլորտներով,  
և հանդուրժում հարաճոճ ծփանքը  
գեղանի միության,  
ուր անարատության ստինքները



հրաշք-զգեստը բյուր հազարներից:  
Կարող է ընտրել:  
Վետվետուն լույսեր,  
սիրո անծրկից թացած աչիկներ,  
շրթունքների դող, սրտի կծկումներ,  
ինքնընկալումը կերտված է այնքան,  
որ խաղաղ հույսի զգեստ է հագնում  
և պարանոցը զարդարում է լոկ  
աստղերի փայլով անդրադարձային:  
Ա՛խ, շնորհ սիրո, նվաճման նավդ  
քանի՜ բարձիթող, քանի՜ մոլորյալ  
ուղեծիր հատեց ու դարձի բերեց:  
Տրտնջոցները շատ եղան, սակայն  
բողբոջը կամքի  
անտեսեց բոլոր ասեկոսները  
և բամբասողը դարձավ մաշվող քար,  
որին կտանեն քամիները, ջրերը,  
մոռացումները ժամանակի:  
Ա՛խ, շնորհ սիրո,  
գեղեցիկի ձգտյալ առաքելություն,  
գալիս ես բուրող  
օրհնությունները խմբագրելու,  
տարածելու,  
հանձնելու փոթորկվող ձայնին  
բանականության:  
Հավասար բաշխում անշուկ, առատ,  
առանց ավսոսանք,  
և դրանից է, որ թպրտում են  
թաքստոցները չար թնջուկների,  
թպրտում անզոր նույնկիսկ նրանք,  
բայց չափն ընդունման, չափը ընկալման  
և վարքագծի վառ դրսևորման՝ միևնույնը չէ  
բոլորի համար...

տրաքվեց անձայն,  
ի՛նչ փույթ նա սիրում`  
լարի վրայով անհողդողդ քայլող  
ու չտատանվող,  
մեղրահսկումի  
փեթակներն ամուր կողերին սեղմած,  
վստահության հար կենսաթրթիռով  
դղյակներ օժող, որոնք կառուցել  
ու օրհնել է այն դատողությունը,  
որը ծնվում է լոկ բարձունքներում:  
Բարձունքի՛ գիշեր...  
Նրա բանալին ավազանում է  
այն կախարդական, ուր Ոսկե Ձուկը  
սպասում է իր ճամփորդությանը  
ճիշտ վարքագծի:  
Սերը հանդիպեց Ոսկե Ձկանը,  
բարձունքի՛ գիշեր, սիրո կացարան,  
ծկան բերանում քո դուռը բացող  
բանալին է այն`  
երազի բույրով նկարագարդված:  
Մեծագույն գործի ճամփան անցնում է  
ուղիղ քո սրտով, դա պատիվ է քեզ,  
քո գծագրած երջանկությունը  
վարվելակերպն է քո ճանաչումի,  
տրված շնորհ է, մի՛ թաքցրու դա,  
տո՛ւր ճամփորդներին ,  
որոնք հասել են դուռդ աստղային:

Բարձունքի՛ գիշեր, սիրո օթևան,  
աստղային որսորդ,  
դու կռահում ես քեզ հասածների  
թերի կողմերը, որսում, նետում ես  
անհաջողակը,

սիրտը լցնելու,  
որ կիսատ-պռատ խորքեր չմնան  
և անկրկնելի մի վրձնահարված  
լրացնի գույնը,  
կնոջն ստիպի բոցեղեն վարդեր  
նկարել դալուկ ճամփեքի վրա  
մրջնանոցների  
և մեղունների միալար հնչող ձայնապնակին,  
տերևի լույսի ոչ պատահական անմեղ շշունջին  
և ցույց տա սիրո գույնը իսկական...  
Չի՞ ստացվելու...  
Հուսահատվելն էլ բացակայում է  
Լեռնուհու հոգում,  
քանզի արևելքը հար բերելու է  
այն տղամարդուն, ում երակները  
անհագ ցանկությամբ կարոտելու են  
Լեռնուհու սիրուն,  
որի ծաղկածածկ ճանապարհները  
անվախճան են միշտ,  
ծերանալ չկա,  
այնտեղ գահավեժ ծորում է մեղրը  
կախարդված գոյի,  
և համբերության բաժակը վարդ է.  
անվերջ  
վերադարձ,  
անվերջ  
սիրո դարձ,  
բայց ձանձրույթ չկա,  
սիրտը ամեն օր տենչում է մի նոր  
բավարարություն.  
կայացած հաճույք և անասելու  
ասված ցնծություն,  
խորախորհրդի ընծայաբերում

հայարտ Լեռնուհին.  
մեղեդին՝ հրայրք,  
մեղեդին՝ միայն երգեհոնային,  
ողողելու է կասկածանքները,  
փնտրելու ոգին,  
չի հապաղելու աստղերին պատմել  
սովորականն ու դե-ծիծաղելին  
և նրանց կերտած զարմանահրաշ  
վիպերգությունը, որի ակունքը  
այս մեղեդին է աստղերին մոտիկ.  
արևաճանաչ,  
գալիքի անծայր մի վարելահող, որը կսնի  
և՛ իր համբավը, և՛ իր կենացը  
խմող խենթերին,  
ուն համբերության բաժակը վարդ է...  
և սիրուց անդին արարման պահն է  
խրոխտ Լեռնուհու...

թաղամասերը վառ կանթեղների,  
մեծարեք ընթացք - գրկախառնումը  
ոլորտների հետ,  
հարևան եղեք-  
անմահ ապրելու վերածննդին,  
տևումը նրա՝ ոսկե գնդակ է -  
գլորված, ընկած Աստծո ձեռքերից,  
տարե՛ք, դուռ-դռներ,  
սերմերը տարեք դեպ ծեր կանգառներ,  
նորոգեք տարտամ անշարժությունը  
թևաբախության,  
կայտառություն թող տիրի,  
թող հոսեն օրերի ջրերը խաղաղ՝  
վարդեր տանելով մտքի պարտեզներ,  
շոշափելով անպարագիծ ուրախությունը  
Սկզբի:

Լսե՛ք, լսե՛ք, դո՛ւռ-դռներ,  
զարդարված ոսկե նռնենիներով,  
որոնք աճել են ցուլի եղջյուրից  
և ունեն հրաշք նշաններ կյանքի-  
տրված վերևից,  
ծավալվե՛ք,  
քանզի փետուրն է գտել Հազարան Հավքի  
կինն այն, ով ասաց. *«Եկել եմ դիմավորեմ  
առավելությունն առավոտների...»*,  
ձեռքին փետուրն է՝ վրձինն արարման.  
թաթախված սիրո սրտի հնձանում:  
Բացվե՛ք, դո՛ւռ-դռներ,  
մի ճյուղ է իջել տիեզերքից վար,  
մի արմատ է բարձրանում  
տիեզերքն ի վեր,  
գաղտնիքներ են թռչկոտում  
ասուպների պես,



## ՆՎԱԳ ԿԱՐՈՏԻ

Առաջին դնով կարոտն ուղեկցեց-  
շեկլիկ դարավանդ Լեռան ոտքի մոտ:  
Քարերի կարկուտ, անտերև ծաղիկ՝  
աղբերանց արուն, փորագրված են  
մամուռներն ասես քարերի դեմքին,  
քարաթռչնակն է խուլ ճտպտոցով  
բամբասում նախորդ անցորդի մասին,  
անտարբերություն կա  
քարերի միջև սփռված բույրում  
ոչխարի հոտի,  
հառաչանքները մեղմ օրորվում են  
հունը կորցրած լեռնաղբյուրների  
ակունքի չքնաղ լուսապսակին:

Տրտնջոցների շարունակական  
վերադարձող ժամ:  
Այսպես չի լինում,-ասաց Լեռնուհին,-  
կարո՛տ են բերել, կարո՛տ երկրային,  
որ փխրեցնում է ապառաժն անգամ  
ու դարձնում շատ տաք մի նվագարան,  
հերկում է քարը,  
աղբյուր է հանում լեռան ոտքերից,  
ծաղիկ է ցանում, թռչունն է խոսում  
բարու կտակած հիշողությունից,  
գառի մայունից խոտն է արթնանում  
կանա՛չ, գիտակից:

Ոչինչն այրված է:

Կարոտ են բերել այն պարտեզներից,  
այն անդունդներից, այն բարձունքներից,

ակունքներն ազնիվ գիլ-գլորվում են.  
վերածնելով իրենց քրտինքով  
մարգագետիններ,  
որոնց աղոթքը անգիր են անում  
քարաթռչնակն ու իր վարուժանը,  
կարոտն է շոյում շեկ դարավանդի  
կողերը ամուլ,  
է՛լ ստվեր չկա,  
ամլություն չկա քարի ընդերքում,  
մտորումները հեռավոր բարու  
գիրկ օղակել են Լեռան ոտքերը  
արթնության գետակ ու վտակների  
մարգարիտներով,  
իսկ խեցիները դարձել են պարիսպ՝  
ի մի հավաքված անուրջների պարին...

Կարոտի՛ անձրև...

Քո գոյությունը փշրում է իսպառ  
ճամփան խորշակի,  
արժանապատիվ ուղի է հարթում  
դեպ հասունացման առոգանություն,  
թանկ էջի վրա սեփական արյամբ,  
գրում է հուշերն անդունդների նեղ  
այն ճամփաների, որ իրենց մասին  
լուրեր են հայտնում մաքրության խորքով...

Կարոտի՛ անձրև...

Մաքրության ճամփա՝ անդունդի միջով.  
տատասկը՝ ոտքին, փուշը՝ ափերում,  
մտքում կակաչը վարդի պարտեզից,  
որ հետո ծնվի վարդակակաչը  
մաքուրի աչքում  
ու նրա փոշին հմայիլ դառնա



## ՆՎԱԳ ԾՆՆՂՅԱՆ

Իրիկնապահի մեղմիվ լույսերում,  
 Ժիր, կապույտաչյա մանուկ էր վազում  
 սիզախոտերն են ուրախության մեջ,  
 գեղեցիկ անուն ուներ թևերին,  
 գիտե՛ր. մայրը ո՞ր դռնով է եկել,  
 ու՞ր է գնալու ու գիտեր նաև՝  
 ամենաքաղցր ու ամենաթանկ  
 զավակն է նրա,  
 ու ոչ թե մայրն է իրեն սնելու,  
 այլ ինքը՝ նրան:

Տխրություն-զավակ,  
 առեղծվածների ճամփան սարսափ չէ,  
 բացահայտումի թևերին երկար  
 թառել են երկու սպիտակ արծիվ,  
 որոնց հայացքից ջարդվում են նույնիսկ  
 բրուտանոցի տծև կժերը,-  
 ճերմակները գիտեն գինը թռիչքի,  
 բայց սպասում կա  
 կեռ կտուցներին,  
 սողմականների շուքերն են ճոճվում  
 հունը նոր գտած ջրի ափերին ,  
 արծիվները նրանց խոցմանն արժանի  
 մագիլ են սրում,  
 անավարտ է մնալու եռուզեռը,  
 գետեզերքները քավություն փնտրողների  
 համար են,-  
 պատմած մեղքերը ջուրը կտանի,  
 կգա մաքուրի հանդարտությունը,  
 և մոտ անտառի խլախավը  
 դարձյալ կհոգնի



և դուռ է բացվել դեպ աշնան անտառ,  
նորընծա հրաշք՝ սրտի նորոգման,  
կանաչն ինքնական դարձել է ոսկի,  
ի՛նչ ավքիմիա...

գույնի, էության թույլատրելի  
անխախտ միություն,  
որի արդյունքը զարմանալի է  
նախ իրենց համար, հետո՝ հայցվորի,  
որ պատասխան է ուզում ստանալ  
ընթացքից ցավի:

Կարգավորված ցավ-այնքա՛ն բնական,  
կանա՛չը՝ ոսկի՛ այնքա՛ն էական,  
որ մամուռները պարզել են իրենց  
ծեռքերը կրքոտ և սպասում են  
գրկախառնումին բանաստեղծական...

Ինչե՛ր կպատմի բարձունքներ տեսած  
տերևը ոսկի. մի ամբողջ քերթվածք՝  
ծնունդի, մահի ու ճամփորդության  
հեզ վարքագծի:

Բացատի փեշը լուռ ծերանում է,  
նա անհանգիստ չէ,  
նա ծերանում է,  
որ նորից ծնվի ինքը իրենից,  
և իր դերն ու տեղը որոշի  
իմաստի սենյակներում:

անվերջանալի փնտրտուքից  
նա խենթանում, գնում է  
հողի ճակատագրի միջով,  
լրացնում կիսատ թողած էջերը,  
խրատում է անձրևաորդերի  
ծույլ, անբան կույտերը:

Լեռնուհին ոտքի տակ ընկած  
մի շողակն քար է վերցնում,  
պահում ափերում  
ու հանկարծ հիշում այն գիշերը,  
երբ քնած էր ողջ անտառը,  
իսկ ինքը՝ անքուն,  
մի գեղեցիկ անցորդի հետ  
հիշողություններ էր բաժանում  
քնած խոտերին...

և երկնքից պայծառ աստղ վայր ընկավ,  
ինքը փորձեց երազանք մտապահել՝  
չստացվեց, երազներն ո՞ւր էին գնացել,  
չհիշեց, աստղը ընկավ, ընկավ ու... չընկավ:  
Նույն թափով ետ սլացավ դեպի աստղերը,  
սկսեց պտտվել նրանց քաղաքներով,  
փողոցներով, կայարաններով,  
սկսեց բոլորին խառնել իրար,  
ահարկու կայծակներ բռնկվեցին  
աստղաճամփեքին,  
կայծակակռիվն առանց որոտի էր,  
առանց ամպերի, ինքը մեկ աչքով  
կայծակի հզոր բռնկումին էր նայում,  
իսկ մյուսով՝ երկնականարից կախված  
մի հետաքրքիր ծառի,-  
նրա ճյուղերին՝ աստվածանուններ ունեցող  
երկնային մարմիններն էին:

\*\*\*

Աշունը քայլում է դեպի ոսկին-  
զոհաբերության միջով,  
նա վաղօրոք գիտի՝ կորցնելու է,  
պատրաստվում է դրան  
կրքի անհայտ պոռթկումով,  
տալիս է ստեղծած խորհրդանիշները,  
տալիս է մեկիկ-մեկիկ,  
առանց վիճարկելու, բայց  
զոհաբերության անկողինը  
չի մնում թափուր,  
չի մնում սառը.  
լցվում է հասուն, փորձառու  
մտքի շաղախով՝  
որպես վերմակ ընտրելով  
ընթացքի օրենքը:

անսահմանությամբ:  
Հառնում է մի ուրիշ վիճակ,  
որի մատներից հոսող աղբյուրը  
հավաքում է գույն, ընթացք, մեղեդի,  
նոր զավակի ծնունդ ու տանում  
վարդածին պարտեզների  
տազնապանների միջով,  
որ գաղտնիքները բացվեն  
լուսաբացների հանգով  
և լույսը մոռացնել տա անցյալի  
պարփակված անորոշությունը:  
Լեռան լանջը սարսռում է  
անտառի ընթացքից,  
սրինգը նվագում է  
Իմաստնության ճակատագիրը,  
անխախտելի չափ ու կշիռ,  
տաճար մտքի, որին չի հասնի ամեն ոք,  
հաստատուն էություն՝  
ճախրող բոլոր սահանքներում,  
ոլորտների երաժշտություններում,  
ներդաշնակի պար, որի քամին ցրում է  
անվստահության ամպերը,  
ճամփորդ - անցվորն ընկերացած քայլում է  
սողունի, կենդանու, ձկան, փետրավորի հետ  
և ճամփին փաղաքուշ հարցնում՝  
կո՞ւշտ եք բոլորդ:  
Նրանց հիշողությունն արթնանում, հասնում է  
մինչև նստվածքները էոյան,  
վաղեմությունը տեսած,  
իրերի հոգուց ընկած  
բառեր է հավաքում ու բերում,  
դրանց ճյուղերով զարդարում  
թիրսոս - գավազանը.

Գանգրահեր Կաղնին թախիծով պատմում էր  
պատերազմների թողած  
շղթայական ռեակցիաների  
ահավոր ազդեցությունը  
քաղաքակրթության պատմության վրա,  
մարդու հրեշացումը, վայրենացումը  
մարդու կողմից:

*«Անցնում է հարյուր տարի,  
քաղաքակրթվում է մարդը,  
բայց ընդամենը  
մի քանի աթոռի համար պայքարը  
գլոբում է ետ մարդու ուղին,  
աթոռին մագլցելու մարմաջը  
քանի՜ լեցուն գավ է փշրում,  
դրանց քանակը գիտեն նրանք,  
ովքեր արքաների հետ դու-ով են խոսում,  
բայց իմ խոսքը լավ չի հասնում ունկերին  
ու մի՛ գարմացեք, ինչո՞ւ են այստեղ՝  
լեռան լանջերին, որ ճամփա ցույց տամ  
արարողներին - բարձրանալու վեր՝  
մաքուր ընթացքով,  
ես դեռ շա՛տ երկար կմնամ այստեղ»...*

Սխալը դեռ մեղքը չէ,-  
ասում եք ձեր ուտքերին փաթաթվող  
ջրիմուռներին,  
ասում ու էլ չեք կրկնում,  
թողնելով նրանց ինքնուրույն նայելու  
իրենց սահմանի  
ժամանակի աչքերին:  
Ընծայումը երախտիքի  
մի օր կբացի բռունցքված ձեռքը,  
այնտեղից կթափվեն  
զարմանալի տխուր մտածումներ,  
որոնց առիթը  
ճշմարտի չհասկացված սիրտն է,  
որը ձայնում է պայծառ ժլարծակումներ:  
Անհանգստությունների  
բումբերանգային դառը կորիզները  
շրջապտույտի քամին կհասցնի թոցնել  
ետդարձի ուղուց  
և նետել ջրհորը քավության:  
Անդորրը հանգիստ կբերի  
մաքուր սպասումին և կշրջանցի  
վաղանցուկ մղումները,  
միտքը նորից կգնա  
անհայտի վարագույրը դիտարկելու՝  
բացե՞լ, չբացե՞լ:  
Երբ որ չես բացում՝ գեղեցկությունն է  
վախի հաճույքի, անհայտի սարսուռի:  
Լոտոսների շուրջ սահող կարապները  
ամեն անգամ հեռուներից բերում են  
լվացված բառեր,  
նրանք մի ուրիշ ճակատագրերի  
մասին են խոսում մթնշաղթի սիրուն բնորոշ  
մրմնջոցներում, որպեսզի պահեն

Ճերմակ լոտոսներ...

Դեդալոսի դիմակով Լուսինը գիտի,  
թե երբ է հաղթանակելու ոգու իդեալը...

ու հրճվում են ծավալները՝  
գույնի, մեղեդու, ցանկության,  
նվազարանի ոգու առեղծվածի,  
ընթացքի շնչառության,  
ծաղկանց բույրի թևերի,  
ծկան թեփուկների համաչափության,  
որոնք գեղեցկության ակնարկն են:  
Ծիծաղի հանգերը լրացնում է  
աշնանավերջի ծղրիդը,  
նա մի վերջ է կապում  
սկզբի պորտալարին,  
մի անավարտ տրակտատ է գրում  
բացատի սեղանին,  
վառում մի լապտեր ծարավի կածանում,  
հայտնում է աղոթքի էությունը  
և լցնում արյան հնձանը:  
Ես ուղեկցում եմ ձեզ,-  
երգում է ծղրիդը,-  
հեշտ չէ ուղեկցող լինել,  
ինձ ծեփում եմ ձեր մաշկին,  
ձեր մատների շարժումներին,  
ձեր ծայնի ելևէջներին,  
ցույց եմ տալիս ճամփան,  
ձեզ թվում է, թե ես մնալու եմ այստեղ,  
բայց մի ուրիշ արշալույսի մեջ  
ձեզ կարթնացնեմ իմ երգով  
և գիշերային ցողն ըմպելով՝ օրոր կերգեմ  
կեսգիշերին:  
Մինչև աներևույթ ճամփիս սկիզբը,  
ուզում եմ Իմաստնությանը  
մի հրաշք ցույց տալ, գնա՛ նրա հետ,  
կամ տա՛ր նրան քեզ հետ,  
նայի՛ր ինչ չքնաղ է նա



տարածության վարագույրները  
և հայտնաբերելու նրանց  
երգեցողությունը ներքին:  
Այդ ես էի, որ օգնեցի Պյութագորասին  
լսելու ոլորտների երաժշտությունը,  
ես նրա ոտքերի մոտ էի,  
բայց նա չզգաց,  
որ իմ երգն իրեն ստիպեց  
բևեռացման,  
ստիպեց լսել անլսելին,  
մի՞թե հատուցում է պետք դրա համար...  
Ուղղակի դու մի սարսռա  
ճշմարտությունը լսելուց,  
դու երկար ճանապարհ ունես անցնելու  
և երբ հասնես Արևի ափ,  
ուզում եմ, որ լսե՛ս,  
լսե՛ս այն երգեցողությունը,  
որի ունկնդրումը  
նախախնամությամբ է քեզ տրված:  
Երգեցողությունը քեզ վերադարձնելու է  
քո ապրած բոլոր պահերը,  
ոչ միայն հիշեցմամբ՝ վերադարձնելու է  
մի չքնաղ մատուցարանի վրա  
դարսդարսած, ներդաշնակության  
բոլոր օրենքներով,  
կբուրի բույրը մեղեդու  
և այս հրաշք նժույզը՝  
նարնջագույն, ճերմակ բաշով,  
որին խնդրում եմ քեզ հետ տանել  
այնտեղ՝ Արևի աստվածության ափ,  
քեզ հետ միասին կսկսի  
իր հավերժական պտույտը.  
լույսի, հրի, պայծառության,



## ՆՎԱԳ ԸՆԿԱՍՄԱՆ

Բացատ սլացավ հին արահետի երակով  
սպիտակ բաշով նարնջագույն ծին,  
սմբակներով թմբկահարելով  
աշնան գույների մեղեդին,  
նա ծածանում էր սպիտակ բաշը  
մեղեդու անցումի հանգով,  
որ հաջորդ տաղի հսկումները  
լինեն հասկանալի, բաղդատվեն  
բուրարծակման ու նվագածորության միջև,  
ինչ-որ իրական պատրանքի սահմանում  
ծուլվելու ճշմարիտը տեսնելու հղացումին:

Իմաստնությունը ժպիտ էր հագել,  
նժույզը պատգամախոսն էր  
երկնային հանդեսի,  
ուր արտաբերվում են սուրբ անուններ  
և՛ սրբացած, մարգարեական գուշակումներ:  
Հրաշալիք է նժույզն այս,-  
Իմաստնության ձայնը դողաց,-  
Իզուր չէր խորհուրդը ծղրիդի,  
չէ՞ որ մանկությունը հեռու է այնքան,  
որքան հիշողությունը ոլորտների,  
նժույզն ածանցյալ գեղեցկություն չէ,  
նա խորհուրդն է իրական կեցության,  
որն ինձ հետ քայլելու է, վարգելու է  
և սլանալու Աստվածային Կեցություն,  
կրելու է իր մեջ մտքի պատմության  
բարձրագույն ակնթարթները,  
կրելու է իր մեջ այն բարությունը,  
ուր ժամադրված են գորությունն

ափսոս, որ մնաց լոկ ինքն իր համար՝  
կարոտախտով լի:  
Հուսահատված էր ամբոխի դավից,  
բայց դա դեռևս պարտությունը չէր...  
Ի՛նչ սփոփանքի միջոցներ ունի,  
ի՛նչ սփոփանքի էջեր է կարդում  
լուսանցքների մեջ,  
ապրում է ներքո սեփական բույրի՞,  
որ մեծարելի լար- ճամփան անցած  
նրան ճանաչի  
անցյալի արի վարքի ճախրանքով,  
թե՞ մտածում է, որ լավը մնաց՝  
որպես հեռավոր մի հիշողություն...  
Ե՞րբ կհանդիպենք,  
ուրիշ մի կյանքի ո՞ր պահի գրկում  
ու դա կլինի մուտքի՞ դռան մոտ,  
ելքի՞ դռան մոտ, ի՛նչ կասենք իրար,  
ես կպատմեմ իմ վերելքի մասին,  
արիությանս, որ դեռ կրում եմ  
իրեն իմ սրտում,  
արդյո՞ք կհիշի նա այն լճակի  
ջուրը ծաղկահամ, ուր լվացվեցինք,  
երբ ծաղկի սիրտը  
նեկտար էր սարքում հավատից անգին...

լռության ժամն այդ նա օգտագործի-  
սատար կանգնելով մեղրահացերին,  
և վերստեղծի նրանց վնասված  
ոսկե կողերը, որ հետո դնի  
նոր երկնի ճերմակ սուփրայի վրա՝  
որպես հավերժի հրաշք ուտելիք...

... Որպես հավերժի հրաշք ուտելիք,-  
ասաց Լեռնուհին,-  
այդ պահի սիրտը ի՞նչ ունի տեսնեն  
մե՛զ համար պահած,  
գուցե ի՞նձ համար, մի՞թե այդքան շատ  
կամ այդքա՛ն երկար պետք է սպասեն,  
որ պատմեն նրան,  
թե հոգիս ինչքա՛ն մաքուր է հիմա,  
թե տառապանքը, որ կրել եմ լուռ,  
կրել առանց բառ,  
հիշել ցածրաձայն-  
մաքրել, սրբել է ոգեղենության  
բյուր սենյակները ու բյուրեղի պես  
փայլեցրել ամեն դուռ ու պատուհան,  
որպեսզի հաղթեն, ինքս իմ ես-ին  
ու գնա՛մ, հասնեմ այն լույս Ղռանը,  
որի ետևում մեղրահացերն են  
Ոսկե Հավերժի...

կարոտն է լցվում ծարավի կողը,  
որ նա արթնանա, տեսնի ծառը այն,  
որի ճյուղերը իջնում են ահա  
տիեզերքից վար ու արմատները  
գնում են դեպի աստղերի հոգին...

Գույնի՛ մեղեդի,

գույնի մոգական խտացումի մեջ  
ասված է այնքան, որ բավական է  
խորունկ ապրելու իմաստությանը,  
Լեռան հոգենյութ՝ վեհության ա՛ստղ,  
ծավալի թեթև թևաբախումը,  
մեղեդիները՝ ընթացքի՛, սիրո՛,  
անձրևի,՛ քամու ու ոսկե մեղվի...  
Լեռնուհու արյուն...

Նրա արյան մեջ նետերն էրոսի  
դարձել են ճախրանք խենթության այգու,  
որի պտուղներն այնքան են բարի  
ու մաքրագարդված, այնքան համաձայն,  
որ նա չի վարվել Նավզիկեի պես:  
Ինքն էլ է ասում. «Նավզիկեի պես  
և կախարդուհի Կիրկեի նման  
չվարվեցի իմ Ողիսևսի հետ»:  
Խաբեությունը՝ հեռու նրանից,  
հոգու ցավով է նա զավակ ծնել,  
ոչ թե մարմնական. ոգեղեն ցա՛վն է արարել  
նրա զույգ որդիներին,  
ովքեր որ իրենց ողջ լինելությանբ  
պիտի տարփողեն վարդե հրաշքը  
նրա էության,  
ոգենյութ դառնան այն բարձունքներին,  
որտեղ աճում են հայելի- ծառեր  
ու արտացոլեն հոգու արարքի  
պատկերը ճշգրիտ օրվա բիբերում...

Ընթացքի՛ անծրև...

Չէ՛, դու չես պարտվում, դու գնում ես հար,

համանվագդ տանում է դեպի

(փա՛ռք քեզ, Տիրամայր ) .

սիրո՛ մեղեդի, քամո՛ւ մեղեդի, մեղեդի՛ մեղվի...

խոսքը անկատար.

Եվ... *«Ինչ-որ մի բան- ինչ-որ մի տեղում»,-*

կասեր գանգրահեր Կաղնու ընկերը:

Ա՛խ, մաժորային ո՞ր տոնայնության

սրտում կպայթեն ու կխաղաղվեն

տակտերն անկատար,

որ անժիրության բեմերում միայն

ծփա մեղեդին ոսկե արտերի

ու տանի՛, տանի անքանակ խոհեր

շիտակի մասին, սփռի ամենուր,

գետնասող ու գեշ մոլախոտերը

մորեխներն ուտեն,

հասունությունը զիլ ծայնով ճչա

խաղողի հուռթի այգիների մեջ.

*«Առագաստները ճմլե՛լ են ուզում*

*կենսաբեր հյութը,*

*առագաստները հարբե՛լ են ուզում*

*հյութից կենսաբեր»:*

Առագաստներում խաղող են ճմլում

ճերմակ ոտքերով ճերմակ աղջիկներ,

նրանցից պիտի սերվեն թռչուններ.

թևերին իրենց՝ սուրբ ավետիսներ:

*«Ի՛նչ հրաշալի տեսակ է ցեղն այս,*

*մեր սաղարթի տակ ակունք է բացվել»,-*

կասեն զույգ Կաղնին:

Ճերմակասրունք ճերմակ աղջիկներ

առագաստներում խաղող կճմլեն

ու ցեղի շուրթը, արբեցած զինուց,

ու ցեղի աչքը,

աչքերի վարդը

նոր խոսք կերգի

և Երգի բարձր հնչողությունում,

կինչի երկա՛ր-երկար ֆերմատա,



## ԹՈՂ ՔՈ ԿԱՄՔԸ ԼԻՆԻ

Քամո՛ւ մեղեդի...

Արևելքում է համբերանք կոփվում  
և ասվում անձայն և ասվում հզոր.

*«Թող Քո կամքը լինի»* և *«Եղիցի լույս»*։

Մինչև եություն. *« Քո կամքը լինի »*  
և արդեն հզոր պայթյուն է խոսքի-  
հզոր լռության բարձրակետերում,  
պատմություններ են ճառագայթները  
աչքերով պատմում քամու թևերին,  
գործողությունը հարատևում է  
և բոլոր, բոլոր ակնթարթները  
ասում են վստահ.

*«Թող Քո կամքը լինի»*,

որ Լույսը անցավ կուլ տա խավարը  
իր մշտանորոգ զվարթունությամբ:  
Քամո՛ւ շրջադարձ, դու ներսն ես տեսնում.

«Խավարի ներսը խավար է միայն».-

դա՛ ես եմ ասում ու քշում հեռո՛ւ,  
բոլորին հեռո՛ւ, որ չշոշափեն  
Սաբակտես կոչվող դեմոնի թևը,  
դու տեսել ես այն բրուտանոցներն  
ուր նա է եղել,

նրանից հետո մնացած բոլոր  
կավանդների փշուրները սուր  
սուզվել են նկուն ու ինքնամփոփված  
խոհերի գիրկը:

Մեղեդի՛ քամու,

կոտրված, ջարդված իրերի ներսում  
երազանքները ամբողջական չեն  
և քո մեղեդին նրանց կհուշի





## ՆՎԱԳ ԽՆԴՐԱՆՔԻ

Քամո՛ւ մեղեդի...

Պտտեցրու սիրո հիմնը,  
սիրուց ծնված սիրո հիմնը,  
թող շարժումը ցավ չբերի,  
ոչ ոք չի ուզում տեսնել  
Գողգոթա տանող ճամփան,  
ոչ ոք չի ուզում այլևս լսել.

**«Ինչ-որ գրված էր՝ այն կատարված է»,-**

թող հողմեր չծնվեն ավազի ու փոշու կույտերից,  
թե ոչ՝ անձրևները կարող են հոգնել ի վերջո,  
սերմնացանի, հնձանների երզը կարող է լռել:

Դու գալիս ես հիշողությունից  
ու լինում ամենուր, մի՞թե անգոր ես  
լուծել ցավ-Սֆինքսի հանելուկը,  
չէ՞ որ տեսել ես այն պահը հաճո,  
երբ արքան հաղթեց,  
շշնջա ցավին պատասխանը քո:

Քամո՛ւ մեղեդի...

Անժամանակյա խնդրանք չի լինում,  
դու այնպես արա,  
որ մենակ խոսող մարդիկ պակասեն,  
միայնակ աստղը  
մի՞թե կարող է առանց այլ ուժի  
ապրել անհունում,  
միայնակ գայլն է անգամ գայլանում  
մենակությունից:  
Նվազի՛ր անվերջ սրինգդ արժաթ,  
որը Դրախտի օդն է հոտոտել  
ու առաջինն է իմացել



## ՆՎԱԳ ՆԵԿՏԱՐԻ

Մեղվի՛ մեղեդի,- ասաց Լեռնուհին,-  
փոխվել է արդեն անտառի գույնը,  
մոտ է պահը այն, որ հաջորդ դռնով  
ներս ուղեկցես մեզ՝ ինձ, որդիներիս՝  
Տխրությանը և Իմաստնությանը,  
մեզ հետևում են արծիվը և ձին:  
Իրենց հետքերով, թևերի ճախրով  
ու ամենուր գրում մտորումները մեր.  
գաղտնիքների մասին հավերժի:

Մեղվի՛ մեղեդի...

Անվերջություն է քեզանից ծորում,  
որն սկսվում է իմ աչքերի մեջ  
ծլած ծառերի մեղրահացերից,  
ուր անլսելին ինչքա՛ն էլ լսես.  
վախճան չի դառնում.  
դառնում է սկիզբ ու գլորվում է  
անբացահայտը բացահայտելու  
մտորումների գավաթը հեռու:  
Իմ ուղիները ոտքի համար չէին,-  
քայլեցին՝ սիրտս, հոգիս,  
աչքերս, թևերս, միտքս,  
որոնք տպված էին  
նյարդերիս համակ լաբիրինթոսում,  
այսպես քայլելուց  
էլ չեմ մոլորվի:-

Մեղվի՛ մեղեդի...

Հնչում է ֆլեյտան:  
Աստվածուհին վեհ

նժույզ ու արժիվ,  
որ հետևում եք մեր վերընթացին,  
տեսնո՞ւմ եք, լսո՞ւմ,  
թե ի՞նչ վարդեր են  
հնչյունաստեղծման,  
ինչպիսի՞ նեկտար, որի շերտերում  
մտահայեցման՝  
Ադոնիս աստծո կաթիլն է արյան,  
վիճակի հրաշք մի փոփոխություն,  
ուր բուրարձակը  
դարձել է տիրող հրամայական –  
հենց ժամանակի նշանների մեջ...

որտեղ ծուլվում են վանկաչափերը  
հավերժ գոյության:  
Գովերգվող ոգին համաչափության  
կասի, որ ի՛մն ես, Վա՛րդ իմ սիրածին,  
կոկոնիդ մեջ է ուղիս սկսվել  
և հասել է վես Լեռան կատարին,  
բոլոր դարերի կերակուրն ենք մենք  
անվերջանալի,  
նրանք միայն մեր շունչը ըմբռնեմք,  
կարող են արդեն քամահրել կեղծը  
ու պահմտոցին՝ վախկոտ- անճարի,  
և առավելը, մեր առավելը  
կծածկի բոլոր սուտ լուծումները  
առեղծվածների...  
Իմ անո՛ւշ, իմ Վարդ,  
աստղերի ճամփով ձգված ծառերի  
կեղևամիսը իմ սիրտն է տվել,  
նրանց բներին փորագրված են  
անուններ ընտրյալ և առարկաներ,  
որոնք հեռացան  
սատար կանգնելու գոյությանը քո...  
Ազա՛տ թռիչքի նախազգացումը  
քո մեջ էր հայել,  
նաև՝ երկուսիս կարևոր ժամին,  
դու՛ ի՛մն ես հավետ,  
Վարդ իմ ցանկալի,  
ինչպես թռիչքն այս տառապանքով լի,  
ինչպես վերելքը,  
վկայությունը այս ծափահարված,  
որից ծնվում է բացառիկ ապրում -  
Գերագույն Մտքի...

Ծնունդ է մի նոր ծաղիկ ծավալի:  
Լույսը ներկում է ծնված ծաղիկը  
այնպիսի գույնով, որ հոգեմյուլը  
ինքն իրեն խայտա նրա ընդերքում,  
ճամփորդի մինչև նոր սենյակները ըմբռնումների  
և հարցումների  
խոր ջրհորները՝  
Իմաստնության և բարի Տիրության,-  
թող որ չունենան մթար անկյուններ  
ոչ մի պահի մեջ...

Լույսի աչքերում ղողանջը դարի  
կանչում է Հավերժի Շեփորահարին...

\*\*\*

Հաղթահարի՛ր ամբոխը, Լո՛ւյս,-  
երգեց Լեռնուհին,-  
թող Սերը չմեռնի նրա բավիղներում,  
սիրո մեղեդին ծառեր է գատում ամբոխից,  
շիվեր է տնկում նրանց կողքին,  
որ տեսակի մեջ պահպանի  
մաքուր մի լինելություն  
որ հավիտյանս ներբողեն նրանք  
բարեկրթության ծեսերը ոսկե:  
Հաղթահարի՛ր ամբոխը, Լո՛ւյս,  
թող նա չխոսի  
ժողովուրդների փոխարեն,  
թող նա հաղթահարվի,  
ինչպես հաղթահարված ոչինչը...

ով չէր զգում՝ հենվի զգացողության հիմքին,  
ով չէր խոսում՝  
Բառը համբուրի նրա շուրթերը,  
և խոսքը տարածվի Արևի հանգույն,  
ով կասկածում էր՝ պարադոքսներից  
խամաճիկների թատրոն թող սարքի,  
հասնի որոնմանն իր (դա՛ էլ է ճամփա),  
ով չէր սիրում՝  
սիրի իր նմանի աչքի ծաղիկը,  
ով միշտ կորցնում էր՝  
հասկանա դա՛ է ամենակարևորը,  
(եթե ոչինչ չունենա՝ ի՞նչ կորցնես),  
ով միայն գիշերներ ուներ՝  
ունենա խինդով  
լցված կեսօրներ,  
ով վրիպում էր՝  
դառնա անվրեպ մտքերի քարտեզ,  
ով չէր համբերում՝  
համբերի մինչև Լույսի մեղեդին,  
որ մղձավանջի խավարը չուտի  
հստակ իրերի գծերը մաքուր,  
ով չէր փրկում՝  
կարդա ծղրիդի օրագիրը,  
ով չէր խնում՝  
խմի Լեռան կատարի Սկիզբը,  
ով չէր իմաստավորում՝  
նայի փեթակների խորքը,  
ով չէր հավատում՝  
հասնի մինչև ձկան ճակատի խաչը,  
ով չէր ապրում՝ արթնանա  
ծառի սաղարթի թռչնաբնի մեջ,  
ով չէր հաղթահարում՝  
սրինգ նվագի,



## ՎԱՐՂԻ ՄԵՂԵՂԻ

Տխրությունն իր կեսօրվա մեջ էր,  
 Իմաստությունը միջօրեի տաք զգեստն էր  
 փորձում,  
 ու աչքի պոչով քրոջն էր նայում՝ Գեղանի Լույսին,  
 ով զբաղված էր պարտեզի խորքում  
 ոգեկոչությամբ արժանիների:  
 Պարտեզն էր արթուն  
 ոգեղենությամբ Մեղեղիների,  
 բլբուլն էր երգում մեղեղին Վարդի...

Վարդի՛ մեղեղի...  
 Քեզ համար հատուկ Քնարն ստեղծվեց՝  
 նվագարանը անուշ մրմունջով  
 և զարգացումի ի՛նչ փուլեր անցավ  
 ցողունդ Կյանքի,  
 որ երգի, պատմի ոգեղենության եղելությունը,  
 շնչառությունը հար-հավերժական,  
 որտեղ ամեն ինչ սկիզբ է առել  
 «բարձրություններից» խոր անդունդների,  
 անդունդի ցավից, քար ճամփաներից,  
 վիհերից դժնի, գեռուններից պիղծ,  
 նեխած ջրերից, որոնք պիտ հաղթես.  
 չկա՛ փրկագին,  
 տարածությունը պահ առ պահ հաղթես  
 ժամանակի մեջ, քո՛ ժամանակի,  
 նավարկես, թռչես, ծուլվես, խառնվես  
 Լռությունների ոսկե բերանին,  
 որ աղմուկն ինքը թաքնվի իր մեջ:

Վարդի՛մեղեղի...

Ժամանակի ջուրը ավազներիդ վրա  
կուսությունից արբած խեցիներ է թողել,  
աղբյուրի ձայնով նոր հնչյուն-բառդ  
կհայտնաբերի թրթիռը նրանց  
անհայտներով լի,  
որ գինեբույր է, ծիածանի գույն,  
ճակատագիրը՝ ծովի օրենքն է,  
հոգու հայելին՝

Արևի շողի ճամփորդությունը:  
Առաջնորդի փառքի ներկայությունը  
նրանց ասպարեզ՝  
լիակատար հույզով,  
ու թող նրանց բացված գաղտնիքը  
հիմնի նոր քաղաքներ,  
որոնց փողոցներում աճեն  
արշալույսի ծառերը,  
քայլեն կյանքոտ էակները,  
թագադրվեն Լուսի և Գույնի  
ներդաշնակությամբ  
ու տեղեկացնեն իրենց մասին-  
միշտ ամբոխից դուրս,  
պայծառ լապտերները հարատևեն  
փողոցների խոսքի բեմահարթակներին,  
նրանց շուրջ աճեն օրվա  
անկյունաքարերը-որպես վարդենիներ,  
բարձրանա շենքը ազատ շնչառության,  
իր բազմաթիվ սենյակների  
տոնախմբություններով:  
Հետո էլի կբարձրանան շենքեր  
ու կմտնեն Քաղաք՝  
մի նոր երկխոսության համար,



հերթով պարում են մեղեդու ներքո  
ու կտակում են՝ իրենց տեսնողը  
հեշտ է հասնելու մինչև ավիդ այն,  
հեշտ է անցնելու Արևից անդին...

*Վարդի՛ մեղեդի...*

*Հիշո՞ւմ ես զառամյալ շների տեսակը,  
ջահել ժամանակ քսմսվում էին ում որ պատահեր,  
քծնում էին ի՛նչ ոտքի ասես,  
որ իրենց կաղ հանգերը  
բանի տեղ դնեն,  
հետո նրանց տշում էին նույն ոտքերը,  
գիշերը սառեցնում էր նրանց,  
ցերեկն այրում էր  
անապատի արևը,  
կաղ հանգերը սատկել, թաղվել էին  
ավազների տակ,  
որոնց վրա պառկած էին զառամյալ  
շները՝ որպես շիրմաքար...  
Նրանց տրված էր Կյանքը...*

Կյանքը քե՛զ է տրված, Վարդի մեղեդի,  
և Քո Բլբուլին,  
ոչ ոք, ում կյանք է տրված,  
չի՛ կարող ձեզ չլսել,  
արծաթ դողանջները կմկրատեն  
հյուսված սարդոստայնները,  
թավուտներից դուրս կգան  
առյուծները էգ, կունկնդրեն,  
ապա կկանչեն բաշ ունեցողներին,  
որ լսեն քո խոսքաշաղը՝  
ծնված արծաթե շամանդաղներում,  
ծաղկանց պես շաղ եկող հնչյունները-

կերակրում են ճայերին, ֆլամինգոներին,  
հազցնում են Գոյության հողն զգացող  
և Խաչը կրող ձկներին,  
նրանք բոլորը լսե՛լ գիտեն,  
նարնջագույն նժույզը  
արծվից թևե՛լ է սովորել  
և ծովը մերթ ընդ մերթ ներկում է իր գույնով,  
ձկները պարում են նարնջագույն պալատներում,  
Խոսող ձուկը նժույզին պատմում է,  
թե ինչպես են իրենք հաղթահարել տիղմը՝  
նրա մեջ ապրող զգվելի որդերին,  
գտել են իրենց ամենախորքերի  
փողոցներն ու գնում են՝ Այո-ից դեպի Ամէն:

Վարդի՛ մեղեդի...

Ծովեզերքին նստած են՝ Տխրությունը,  
Իմաստնությունը, Լույսը Գեղանի,  
Տիեզերքն ի վեր արմատներ են բարձրացրել,  
Տիեզերքն ի վար ճյուղեր են իջել՝  
սրբել, տարել են նինջը անիմաստ:  
Նրանք ասում են. «Խմեցինք մեր  
անքանակ ցերեկները,  
խմեցինք մեր գիշերները  
և պահ տվեցինք  
Մաքուր ափի հիշողության ծալքերին,  
այնտեղ թող հազեցնեն ծարավը նրանք,  
ովքեր չեն սկսել նավարկությունը՝  
Հոգու Գետում, Հոգու Ծովում, Հոգու Օվկիանում,  
սրտնեղվել պետք չէ, քրքրվել պետք չէ.  
սեփական արյան փշերի վրա,  
օրինյալ անդորր է  
գույների ճշմարտության սիմֆոնիան,  
հոգին չի հերձվում, որ նրան գտնես,

թոթափած ինքնագուսպումը,  
ծղրիդի մեղեդու իմաստուն ժպիտը հագած՝  
չէ՞ որ նրա մանկությունն այնքան է հեռու,  
որքան՝ ոլորտների հիշողությունը:  
Հնչիր, ֆերմատա,  
դիրիժորի փայտիկը ծղրիդի մոտ է,  
նա ձգում է քեզ ձայնասահմանիդ տարածքով՝  
ականատեսը դառնալով  
ձայնիդ առանձնաշնորհ բռնկումներին  
և ռիթմ-կշռույթի համահնչունությանը,  
դիրիժորի փայտիկը միաձուլում է  
հնչյունների աջ ու ձախ թեքվող ոլորումները,  
բոլոր ձևերի առինքնող հեռաստանները,  
հնչյունի արթնացած  
հնամենի երազները գոյության,  
ընկալում է ներկայությունն այնտեղ եղողների,  
լիանում է ճիշտ կշռույթի  
ներգործությամբ:  
Հնչիր, ֆերմատա՛, տարածվիր  
աչքդ պահած աստղաթռչունի ճամփին,  
հերկելով տենորի դաշտերի սերուցքը-  
ծաղկա-թիթեռա-բզեզային,  
նրանց մեջ ճանաչիր քեզ,  
նեկտարից ներշնչված, ծլարծակումը  
ընտրիր կարգաձևի ուղեցույց,  
սարսռալով դողա-  
զգայարաններիդ, մտքերիդ մելիզմներում,  
նշաններով արարող  
հրավիրիր մի մաքուր սուպրանոյի՝  
մարմնավորելու աստվածային ներգործության  
միջնորդ- հրեշտակուհու դերը,  
հասիր տոնայնության բարձրակետին-  
կատարելագործելով

Վարդի՛ մեղեդի...

Ճամփորդությունը սիրո դաշտերով  
զուգել է մեղվի առողանությամբ,  
ո՞ր դարի խորքում, ո՞ր փեթակի մեջ  
կծնվի պահը սիրո հանդիպման,  
Լեռնուհու սերը պայծառ է այնքան,  
որ առանց Նրա, նա չի ճաշակի  
մեղրահացերը Ոսկե Հավերժի...

շարժման անձրևի,  
կարոտից ծնված վարդակակաչի,  
անմեկնելի ծով-գույնի մեղեդու,  
քամու սրինգի,  
սիրո ավետման առազաստների,  
որտեղ խաղող են հունցում ու ճմլում  
ճերմակասրունք աղջիկները այն,  
որ ցեղի շուրթը արբենա գինուց,  
ու ցեղի աչքը, աչքերի վարդը  
նոր Խոսքով հաղթի  
ամենաբարձր հնչողության մեջ...

Վարդի՜ մեղեդի...

Դու՜ պատասխան ձայն- անեզրությանը...

Անծիրությունը հասկացող ոգի,  
և սկիհները քո կախարդական,  
դրված դռանը ցնծության հիմքի,  
լցված են զվարթ, խենթ հնչյուններով,  
ձայնանիշեր են թռչում նրանց վառ  
խնկաբերանից  
ու շուրջպար բռնում  
տիեզերքի տաք անկյունում նստած  
Մայր- մեղվի շուրջը, որ պահեն նրան,  
տաքացնեն նրան իրենց ջերմությամբ  
ու բեղմնավորված առ Լույս աղոթքում,  
ոսկեթև մեղվի զգեստը հազած  
աստղիկներ ծնվեն՝  
որպես հովանի նոր փեթակների...

Վարդի՜ մեղեդի...

Դու՜ պատասխան ձայն -

Մայր-մեղվի կանչին

և ըմբռնումին նրա հարատև

երգասաց շուրթի հարսանիքներին:  
Հարսանիքների խնձորները վառ՝  
կարմիր ու ոսկե, կապույտ ու կանաչ.  
Երթի են ելնում լաստանավերով՝  
առանց թիերի, առանց առագաստ,  
հանդուգն ու վեհ,  
ծովի ճակատին քանդակելով լուռ  
ծովինարների աղոթքը վերին,  
որ եռացել է ծովի խորքերում՝  
համեմված խորքի այն տեսիլներով,  
որոնք ծնում են նոր հիշողություն՝  
մակընթացության ակերը պեղած,  
հին հիշողության աստղերը լցրած  
տեղատվության սրտերը դյութված...

Վարդի՜ մեղեդի...

Քո մեջ է Ծովը և ծովեզերքի պարտեզը գողտրիկ,  
և մտորումի ակըր ասողիկ,  
ուր հասունացած մրգեր են շարում  
իրենց մոր ճամփին՝ Իմաստնությունը,  
Տխրությունը հեզ, Լույսը Քեղանի:  
Մրգերը՝ երգեր՝ համի ու բույրի,  
գույնի ու ձևի առեղծվածներում...  
Նորից է երգում Բլբուլը Վարդին,-  
Ի՛մ անո՛ւշ, ի՛մ Վարդ,  
դու՝ պատասխան ձայն  
երկնային բոլոր ծովերի կանչին,  
բայց արժե՞, որ քեզ լսի ամեն ոք,  
կներվե՞մ այնժամ,  
կպայծառանա՞մ տիրույթները ողջ,  
թե՞ երկինքներից մի ձայն կլսեմ.

*«Չկա քեզ ներում»*

և մենակության մեկնությունը ինձ

աջ ցուցամատին մեղուն ոսկեթև,  
ծախին՝ ծղրիղը,  
աջ ձեռքին գինու թասը փրփրալի,  
ծախին՝ փետուրը Հազարան Հավքի,  
փետուրը, որով անմահանում են  
մտորումները մագաղաթների...  
Քո մեջ են նրանք,  
բայց փնտրում են քեզ բոլոր պահերին,  
բոլոր պահերի նավահանգստում  
վանկաչափական,  
ուր մի խենթ միմոս,  
ճիշտ ասելիքի սլաքին նստած,  
հարդարում է այն առավոտներում  
համբույրի ցողով,  
հետո շոշափում նախաստեղծ բառը  
յոթ երկնից անդին  
ու լաց է լինում ուրախությունից  
պատգամախոսի արցունքներով ջինջ:

Բա՛ռը... կաթում է փետուրի խղճից...  
Քո ներսում է նա, բայց փնտրում է քեզ  
և օրհնյալ է, Տե՛ր, պահը փնտրումի,  
և կայանում է բառից մինչև խիղճ  
հղիությունը հաջորդ միտք - բառի,  
բառից մինչև բառ լուռ օտարվում են  
տարածություններն անկենդան, անգո,  
նրանց տեղ մեկեն վեր են խոյանում  
թռչուն-քաղաքներ ու գալակտիկաներից  
հեռու-հեռավոր  
նրանք դառնալու են,  
որպեսզի արթուն պատմություններով՝  
նորից նվաճեն անսահմանը-  
Վարդի շուրթերին գրված հոգեբույժ



## ՀԱՎԵՐԺԻ ՈՒՏԵԼԻՔ

Լե՛րը... Իր Այգի՛ն...

Հեսպերոսից վառ լո՛ւյսը Քաղաքի...

Բայց կոչվածության պայման կա այստեղ,  
եղելության մեջ հենց Քրոնոսի:

Հափշտակության գիրկն ընկնել պետք չէ,  
որպեսզի հսկվի ծնունդը նրանց  
հուսո լանջերի կաթնաղբյուրների,  
կանաչ ծառերի դրիասների,  
կենաց ճամփեքը ձեղքող քերթողի,  
իրենք քաջ գիտեն գուշակությունը-  
որտե՞ղ է ծնվում Բառն աստվածային՝  
Կաթնաղբյուրների կաթնեղ կրծքի տա՞կ,  
Լեռան կատարի ծանուցված չափո՞ւմ՝  
վասն թռչչքի...

Եվ կան աղմուկներ, որոնք օգնում են  
նոր բարձունքների տեսիլք-ծնունդին,  
որ ցուցանված է Հեսպերոս աստղի  
վերին շերտերում՝

որպես արտացոլք անեզրականի:-

Նաև հավերժի, որպես հավերժի

հրաշք ուտելիք,-ասաց Լեռնուհին:

Լուսաշերտերը մեղվի համ ունեն

ու մեղվի բուրմունք,

եկե՛լ է Մեղուն

ու իր շուրթերի

համաչափությամբ

շարում է նեկտարն իր թևիկներին,

կարդում տառերը մեղրաստեղծիչ

փեթակների լույս շնչառության մեջ,

բառեր է ընտրում՝ ծիրանի, զվարթ,



Նրա հսկումին անդրերկրային  
ու կռահելին՝  
Նոր ծնված մեղուն - նոր մեղեդիով,  
ժիրանի գույնով,  
մինչև մեղրահաց իր ճանապարհով.  
դառնում է իմաստ, հավերժ գաղափար  
գոյաբանական...

Ապրո՞ւմ են արդեն  
արահետները մտահղացման  
լուսաբացների,  
կբացվեն մեկ-մեկ ներքին ծալքերը  
երգասացության,  
կթափվեն երգեր սուրբ առավելի  
Գեղուհի Լուսի աջ ուսին դրված  
գինու սափորից,  
կլցվի գավը՝ եռո՞ւն, փրփրալի  
և այն աստվածը նախնյաց սիրելի,  
անամնեզիսում զվարթ կժպտա  
ու սրտանց կասի.

«Գնացե՛ք, այդպես,  
ու թող հար լինի օրերի գինին  
Մելոսի սրտի, գնացե՛ք այդպես  
շրջադարձերով մեծ խոյանքների,  
խառնվեք մի պահ թռչունի երգին  
Նրա պոչից կախ յոթնագույն ծեսին,  
բարձրացեք ծառը մտածողության,  
որի ճյուղերը շոյում են ափով  
կատարելության ծաղիկը բոսոր,  
օրերի գինին անհրաժեշտ է ձեզ,  
որ բացարձակին նայեք  
հայելու ասպարեզներում,



## ՄԵՆՔ ԲԱՐՉՐ ԵՆՔ ՄԵՁՆԻՑ

Նա տեսե՛լ է մեզ,-ասաց Լեռնուհին,  
և հրականացայտ, վարդե շուրթերը  
լուռ սրսփացին,  
ապա ժպիտի լուսացույքերում  
սկսեցին երգել Լեռան կատարին-  
Վարդի՛ մեղեդին...  
Ինչքա՛ն հնչեղ է ձայնը Բլբուլի,  
յոթնագույն թևով ցողում է գինին  
Լույսի սափորի - բոլորի դեմքին,  
գրկում է Մեղվին, ապա Ծղրիդին՝  
թևածում շուրջը նարնջագույն ձիու,  
հարցնում հեռավոր աստղերի մասին,  
աչքով է անում սրաչյա արծվին՝  
(նա հզոր՝ ճախրի հպարտության մեջ,  
Բլբուլը հզոր՝ երգի երկնքում):

\*\*\*

Կարգավորում եք շնչառությունս,  
օ՛, իմ եղբայրներ՝  
Իմաստություն և անամպ Տխրություն,-  
Բլբուլն է երգում,-  
կարգավորում եք շնչառությունս  
ամենաբարձր այն տոնայնությամբ,  
որում բարձրագույն ակնթարթներն են  
մտքի պատմության,  
բարությունն է, ուր ժամադրված են  
զորությունը և առաքինության հայտնաբերումը,  
որոնք արյան մեջ հարուցում են լուռ  
բառեր ու բառեր,

մեր գործողությամբ մենք տեսանք  
շատ բան, խորհեցինք նույնիսկ  
բանականության սահմաններից ներս,  
սահմաններից դուրս,  
բնագանցության օրենքների մեջ,  
օրենքներից դուրս,  
ծավալներ տեսանք  
ու մեղեդիներ ընթացքի բեմում,  
համադրեցինք  
գոյաբանական հավերժի մտքին,  
բայց, ավա՛ղ... մի՞թե կարող ենք տեսնել  
ամբողջ ծավալը Աստծո Քերթվածի,  
ծավալը ամբողջ,  
գաղտնախորհուրդը հրամցնում է արտացոլումներ,  
որոնք կրում են բովանդակություն խորհրդավորի,  
ստիպում իջնել  
տառապանքի լայն ապրումի խորքը  
ու գնալ անվերջ, ու ելնել անվերջ  
առ Աստված միտված աստիճաններով,  
ու ելնել անվերջ, սակայն չհասնել,  
նույնիսկ քույրը իմ՝ Լույսը գեղանի,  
որ մի շողիկն է Տիրոջից բխած,  
և շա՛տ վաղուց է աստվածների հետ  
ամբրոսիա խմել,  
մեզ չի կարող տալ լեցուն պատասխան,  
որ թռիչքներում ու անկումներում  
բացարձակ լինենք հավերժի համար,  
կամ էլ բացարձակ հասկանանք  
չափը աստվածահաճո և նշանները,  
թեև աստվածն այն նախնյաց սիրելի,  
իր հեռուներից մեզ պատգամել է,  
որ բացարձակին  
նայենք հայելու ասպարեզներում...

Ծաղկունը արդեն մոտիկ է այնքան,  
որ փնտրտուքի ուսապարկ պետք չէ:  
Մոտիկ են արդեն գույնը և բույրը,  
ձևը և փոշին մեղրաստեղծիչ-  
իրենց պատկերով,  
իրենց խորքերի բյուր սենյակներով,  
նրանց դռներով,  
դռներին գրված խոսքի հանգերով,  
գեղեցկության հաղթ վերադարձներով  
ու առողջությամբ:

Տե՛ր իմ,  
Քո Հորը տեսա բյուրավոր  
ամպերի հոգում,  
ուր երկինքների համն է ոլորվում,  
Քեզ ձեռք տվեցի Մորդ գրկի մեջ.  
հնազանդվեցի չորս գրքի ճամփին,  
և խաչափայտին մի պահ,  
լոկ մի պահ ես խաղաղվեցի  
հենց Քո փոխարեն:  
Ու հիմա արդեն կաթում է Կյանքը  
Արևի գույնով,  
հրեշտակները հավաքում են այն,  
որպեսզի բաշխեն կավե թասերով,  
Սկիզբն ու Վերջը հասկացող, քննող  
Քո ճամփորդներին,  
և օրհնյա՛լ ես, Տե՛ր...

\*\*\*

Օ՛, Ոսկեթրթիռ ժամանակի  
անհանգիստ ու հավերժ առկայծող  
Ճառագայթ.



## ԱՅՆ Ո՞Վ ԷՐ, ՄԱՅՐԻՎ...

Այն ո՞վ էր, մայրիկ . . . . .	5
Ով է ծաղկում սրտիդ մեջ . . . . .	7
Թագուհին հավատի . . . . .	9
Geschreiben Für Frau Elisabeth Leonhardt . . . . .	10
Օր է ծննդյան . . . . .	12
Պատուհանի տակ ամռան սպասում . . . . .	13
Ինչպես լսեցիր . . . . .	14
Ինքնանկար... . . . .	15
Աղոթք . . . . .	17
Որտեղ ես կանգ առել . . . . .	19
Կհանդիպենք դեռ . . . . .	21
Սիրելի մարդիկ. . . . .	22
Օրը այն արթուն . . . . .	23
Ամեն օր . . . . .	25
Հույս ավետումի... . . . .	26
Սրտի երգ . . . . .	27
Երկնի հետ . . . . .	28
Հասուն պարտեզ . . . . .	29
Թող ուշ կանչի . . . . .	30
Երբ հեշտ լինի . . . . .	31
Նրանց պատմել եմ ջրերի ճամփան . . . . .	32
Erhebung... . . . .	34
Օ՛, այն երգերը, որ դեռ չեն գրվել... . . . .	35
Հարկավոր է այն ծաղիկը գտնել . . . . .	36
Լաց եղիր . . . . .	37
Ափսոսանք ու սպեղանի . . . . .	38
Իրիկնային . . . . .	39
Ո՞ր հայելու մեջ . . . . .	40

Նվագ խորհրդանիշների .....	121
Նվագ ծղրիղի .....	125
Նվագ ընկալման .....	130
Նվագ գալստյան .....	133
Նվագ էության .....	135
Նվագ վերելքի .....	137
Նվագ լինելություն .....	139
Թող Քո կամքը լինի .....	142
Նվագ խնդրանքի .....	144
Նվագ նեկտարի .....	146

### **Գլուխ երրորդ**

Նվագ հրաշքի... .....	149
Նվագ հանդիպման .....	151
Սաղմոսանվագ .....	153
Վարդի մեղեդի ... .....	156
Պատասխան ձայն .....	167
Հավերժի ուտելիք .....	174
Մենք բարձր ենք մեզնից .....	178
Նվագ անզուգական .....	181

<b>Բովանդակություն .....</b>	<b>184</b>
------------------------------	------------

Դարիկո Վիրաբի Խաչատրյան  
Բանաստեղծ, արձակագիր  
Ծնվել է 1959 թ.

Նախորդ տարիներին լույս են տեսել նրա  
«Թներս թող, Աշուն», «Չարչարանաց ծաղիկ»,  
«Յոթ օր-յոթ քանդակ», «Հե՛յ, բախտի աստղ»,  
«Ճերմակ թևերի խիղճը», «Նարնջագույն թոնիր-  
ներ» և «Անտես վարդերը մտքի» ժողովածուները: